

# ԱՎԵԴԱՊԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

The Weekly **AVEDAPER**, American Bible House, Constantinople.

ՀԱՏՈՐ ԿԵ

Կ. ՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 6, 1912

ԹԻՒ 27

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀՈՐԻՋՈՆԸ. Ուէյսի մէջ պետութեան ու եկեղեցիի բաժանում:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Արձակուրդ, Հայերէն լաւագոյն հարիւր գիրքերը:

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ. Դուրսը կեցողներուն, Լուացարար հերոսուհին:

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ. Հնդկական ափիոնը Չինաստանի մէջ, Յովհաննէս Յովհաննիսեանէ քանի մը քերթուածներ — Աւետարան, Մայրս, Խաչի ներքոյ, Հայրիկ:

ՅՕԳՈՒԱՄԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ. «Ազգ. վերածնունդիւն» Աւետարանով», Ընկերալին կեանք եւ Քրիստոնէութիւն, Կրօնք եւ գիտութիւն, Աւետարանչական այցելութիւն դէպ ի Քիւրտիստան, «Մի մոռնար զիս», Մարզումի Աստուածաբանական Ճեմարանը, Պատերազմի տուրքը, Հայ կեանքը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ՀՈՐԻԶՈՆԸ

ՈՒԵՅԼՍԻ ՄԵՋ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՔՍՓՐԵՐՄԻ Մէնս-  
ՈՒ ԵԿԵՂԵՑԻՒ ԲԱԺԱՆՈՒՄ. ՓԻԼՍՓՈՂՆԵՆ Ե-  
ԿԵՂԵՑԱԿԱՆ Պատ-  
մուծեան ուսուցիչ և կարեւոր երկասիրութիւն-  
ներու հեղինակ Փրոֆ. Վրերն Պարթլէթ Թայմսի  
մէջ հետեւեալ նամակով կը պատասխանէ Ուէյլսի  
մէջ եկեղեցւոյ և պետութեան բաժանման ծրագրին  
ընդդիմացողներուն՝ ձեռնհասօրէն պարզելով Պե-  
տական Եկեղեցիին չպատկանողներուն դիրքը և  
հայեացքը :

— Երբքի Արքեպիսկոպոսը անցեալ օր յայտա-  
բարեց թէ սոյն շարժման առարկողները լոյ միայն  
եկեղեցական պաշտօնեաներու , այլ և ամէնէն ըն-  
տիր և ամէնէն հոգեւոր բազմութիւ ոչ-Անկլիքան-  
ներու համակրութիւնը կը վայելեն : Ասոր դէմ  
նախնական երկու դիտողութիւն ունիմ : Նախ ,  
ամենայնոք բան է եկեղեցւոյ և պետութեան փո-  
խադարձ յարաբերութիւններու հարցին մէջ հակա-  
ռակորդներու շարքերէն համակարծիք գտնուողները  
իրբու «ամէնէն ընտիր ու ամէնէն հոգեւոր» ան-  
ձերը ներկայացնել : Այս ուրիշ բանի չծառայեր ,  
բայց եթէ վէճը սասակացնելու անպացուցանելի  
և անհերքելի ակնարկութիւններով , Երկրորդ ,  
այդ յայտարարութիւնը անօգուտ է , քանի որ կըր-  
նայ նոյն շեշտով ու աւելի իսկ պատճառով կըրկ-  
նուիլ այն Անկլիքաններուն նկատմամբ , որոնք  
քաջութիւնն ունին բողոք բառնալու իրենց իսկ  
եկեղեցիին ներկայ պաշտօնական ընթացքին դէմ :

Աւելին կայ : Արքեպիսկոպոսն անշուշտ չյա-  
ւակնիր գիտնալ ոչ-Անկլիքաններու այս կամ այն  
խումբին միջին զգացումը այնպիսիի մը չափ , որ  
անձամբ կը պատկանի ոչ-Անկլիքան մասնաւոր ե-  
կեղեցիի մը և անդադար մտերմական յարաբերու-  
թիւն ունի ոչ-Անկլիքան միւս եկեղեցիներուն պե-  
տերուն ու ժողովրդին հետ : Եւ այս հանգաման-  
քով խօսելով կը պարտաւորիմ համոզումս յայտ-  
նել թէ Արքեպիսկոպոսին անդրդուելի «Լաւբեմի»  
ոյժ տուողները արդարեւ փոքրաթիւ են Անգլիոյ  
թէ Սկոտլանդի խոհուն ոչ-Անկլիքաններուն բազ-  
մութեան հետ բաղդատմամբ : Կ'ըսեմ նաեւ թէ ա-  
ւելի փոքրաթիւ կ'ըլլան անոնք ակնարկուած դա-  
սակարգին պատկանող պայծառամիտ մարդոց մէջ ,  
եթէ նկատի առնուին այնպիսիներ միայն որոնք  
ոչ-Անկլիքան են սկզբունքով և ոչ թէ սոսկ ա-  
ւանդութեամբ կամ հակումով , Իրողութիւնը սա  
է թէ մենք այնպիսի ժամանակի մը մէջ կ'ապրինք  
ուր առ հասարակ սովորականէն նուազ կ'ըմբռնուին

տրամաբանական հետեւութիւնները դիրքերուն ,  
որոնց հետ իսկապէս զուգորդուած են մարդիկ :

Կ'ըսեմ ուրեմն թէ իրենց դիրքն ըմբռնող ոչ-  
Անկլիքաններու ստուար մեծամասնութիւնը որոշ  
կը ջատագովէ կառավարական ծրագիրը , և իրա-  
պէս զարմացումով կը դիտէ երկու արքեպիսկո-  
պոսներուն դիրքը իրբու Հիւրքերտի, Օքսֆորտի և  
Լինքընի եպիսկոպոսներուն դիրքէն տարբեր դիրք  
և իրբու Ուէյլսի խնդրին ընդարձակ իրողութիւն-  
ները փոքրկացնող տարօրինակ փորձ : Եթէ ոչ-  
Անկլիքանները աւելի գործօն կերպով չյայտանցին  
իրենց կարծիքը այս հարցին վրայ , պատճառը սա  
է որ խնդիրը Ուէյլսցիներու գիրքով և 1869ի Իր-  
լանտական օրինակին ընդհանուր հետեւանքով լուծ-  
ուածի պէս էր , և չուզեցին կրօնական գծաու-  
թիւն յարուցանել Անգլիոյ մէջ : Անոնց լուծութիւնը  
Ուէյլսի ոչ-Անկլիքաններու խնդրին հանդէպ իրբու  
անտարբերութիւն մեկնելը սխալ ներկայացնել է  
անոնց միտքը :

Գալով եկեղեցապատկան կալուածներու վերա-  
բերեալ պայմաններուն , կը հաւատամ թէ ոչ-Անկ-  
լիքանները ընդհանրապէս բանաւոր կը գտնեն դա-  
նոնք և կը կարծեն թէ լիովին յարգուած են ազ-  
գային այդ կալուածները երկար ժամանակէ ի վեր  
գործածողներուն ու նոյնչափ ժամանակէ ի վեր այդ  
արածութիւնէն զուրկ թողուածներուն դիւրագա-  
ծութիւնները : Այսպիսի խնդրի մը կարգադրու-  
թիւնը երբեք չկրնար վշտառիթ չըլլալ : Բայց այդ  
ըսել չէ թէ անիրաւութիւն կամ վնաս կը գործուի  
մէկ կամ միւս կողման : Դրամական թէ կալուա-  
ծական ալէն տեսակ եկեղեցապատկան հարստու-  
թեան սահմանադրի պարզ թուականն է 1662 :  
Այդ թուականէն ի վեր Անգլիոյ և Ուէյլսի Պետա-  
կան Եկեղեցիին միացած է իր ներկայ հիման վրայ  
և իր սեփական ինչքը դիզած՝ ներկայ պայմաննե-  
րով : Տասնորդի տուրքը և ուրիշ քանի մը հա-  
սոյթներ որ եկեղեցւոյ պայծառութեան յատկաց-  
ուած չեն՝ 1662էն առաջ կային և ամբողջ ժողո-  
վըրդին կը պատկանին իրաւամբ : Այդ գումարները  
ներկայ պայմաններուն տակ կրնան ամէնէն բա-  
նաւոր կերպով շահագործուիլ՝ յարանուանական  
նպատակներու տեղ բարեսիրական նպատակներու  
միայն յատկացուելով : Այսպիսի կարգադրութիւն  
մը իսկապէս օժանդակ հարստութիւն մը պիտի ըլ-  
լայ ժողովրդին , և պիտի ծառայէ անոր մարդկայնա-  
կան կամ քաղաքակրթական գործերուն : Յանձնա-  
ժողով մը կրնայ խորհիլ ու որոշել թէ այդ գործերը  
ինչ ըլլալու են , բժշկական օգնութիւն թէ կըր-  
թութիւն կամ համալսարանական աստուածաբա-

նութեանն ունեցում : Բայ աստի, օգնական եկեղեցականներու համար արդար կարգադրութիւն մը կրնայ ըլլալ ընդհանուր հաւանութեամբ : Շատեր ալ պիտի հաւանին որ թոշակաւոր եկեղեցականներ իրենց կենսաթոշակը եկեղեցիին տրամադրութեան տակ դնեն, սոյնպէս որ անոր հարստութիւնը նպաստաւորութիւն և զիրաւ ձեռք բերուի ինքնապահութեան այն դրութիւնը, զոր պատճենէն բաժնուած մարմինն պահեստի գումարները անշուշտ պիտի ապահովեն օր մը : Միւս կողմէ կառավարութեան ծրագիրը գոնէ նկատուով մը շտեմբու, որոնց մէջ է նաեւ յօդուածագիրս, առատաձեռն կը թուի ի վնաս արգարութեան : Կ'ակնարկեմ մայր եկեղեցիներուն ապագայնացումը, զնելով զանոնք միայն մէկ ժողովրդի հսկողութեան տակ : Կ'ընդունիմ թէ ուղիղ է անցեալի մը, ուր ազգային կրօնը միակերպ էր, այդ յիշատակարանները այն ժողովրդին տրամադրել, որու հետ անոնց պատմական դուզորդութիւնները ամէնէն աւելի կենդանի են, և որ կարող է լաւագոյնս գործածել զանոնք իր ծիսական պաշտամունքին մէջ, Բայց պէտք չկար որ ահողջովին ազգային հսկողութեանէ դուրս թողուէին չյանձնուելով տեղային իշխանութեան մը, որ իրաւասութիւն ունենար բացառիկ ատիթներով տրամադրելի ընել զանոնք աւելի ընդհանուր կամ համազգային պաշտամունքի համար, առանց խանգարելու արտօնութիւններն այն խումբին, որու կը յատկացուի անոնց ընդհանուր գործածութիւնը : Այս կը թուի խնդրին միակ լուծումը, ոչ երբեք անկարելի և բոլորովին արդար չհակիրճներու մեծամասնութեան համար : Այսպիսի կէտերու վրայ անտարակոյս կարծիքի անհամաձայնութիւն կայ նոյն իսկ ոչ-Անկլիքաններու մէջ : Այս մասին ալ անոնց ու չափաւոր Անկլիքաններու միջեւ փոխադարձ զիջում կարելի է ծրագրել զեռ վերջնական հանգամանք չստացած :

Գիտեմ թէ շատ Անկլիքաններ Ուէյլսի եկեղեցիին խնդիրը պետական ծրագրին համաձայն լուծելու ձեռնարկին դէմ օտառարկութիւնը կ'ընեն թէ Ուէյլսի եկեղեցիին պետական նպաստ ընդունելէ դադարելէ ետեւ պիտի դադարի կազմային լիակատար միութիւն ունենալէ Անգլիոյ իր քոյր պետական եկեղեցիին հետ : Անխուսափելի է այդ : Բայց ցուցուածին չափ մեծ կորուստ մը չէ : Իրական փոխադարձ յարաբերութիւն ու օգնութիւն տակաւին հնարաւոր են, և ասոնք են կրօնական միութեան էական պայմանները : Մնացեալ կորուստը ոչինչ է բաղդատմամբ Քրիստոնեայ այլազան խմբակցութիւններու միջեւ արգարութեան

այն օրէնքին բռնաբարման, որ կ'անուանուի «պատեհութեան հաւասարութիւն» : Սոյն օրէնքին մնացուն բռնաբարում է եկեղեցիին պետականութիւնը և առջնակարգ բռնաբարում, վասն զի անով պետութիւնը մասնաւոր խումբի մը իրաւունք կուտայ շրջանակի մը եկեղեցիին կողուելու և իբր այն նկատուելու, Քրիստոնեայ միւս խումբերը ոչ իբր եկեղեցիներ, այլ իբր լոկ աղանդներ երեւցնելով : Ասկէ կը ծագին ամէն ուրիշ զրկումներ և ասով կը շարունակուին յօշափելի թէ զգալի բայց ոչ բացատրելի ուրիշ տեսակ զրկումներ որոնք սակայն ոչ նուազ իրական են :

Ի վերջոյ կրնամ արդեօք Անգլիոյ և Ուէյլսի Անկլիքաններուն երկու հարցում ուղղել իբրեւ այնպիսի մէկը, որ ոչ միայն Անկլիքաններու, այլեւ անոնց եկեղեցիին հանդէպ խորին սէր ու յարգանք կը տածէ իրենց իսկ գործին համար :

Նախ, պիտի ուղէի՞ք ոյժ տալ որ Քրիստոնէութեան Մկրտական հատուածը, զոր օրինակ, շարունակէր պետական եկեղեցիի մը դիրքը պահել ըստ օրինի իբրեւ «եկեղեցին» ճանչցուելով Քրիստոնեայ միւս խումբերէն որոշուելու համար : Եթէ պիտի չուղէիք, պիտի զգայի՞ք թէ իրերու այդ կարգը փոխելու ձեր ձեռնարկը ուղիղ պիտի ըլլար «եկեղեցեւոյ դէմ թշնամութիւն» համարիլ :

Երկրորդ, կը հաւատա՞ք իրօք թէ Ուէյլսի համար առաջարկուած ծրագիրը անյաջողութեան մասնելով Ուէյլսի «կրօնական դառնութիւնը» պիտի մեղմանայ մասնաւոր և ոչ թէ սաստկանայ ծանրապէս : Եւ վստա՞՞ք թէ ի վերջոյ այնպիսի լուծում մը պիտի ձեռք բերուի որ ձեր եկեղեցիին ու ընդհանրապէս կրօնի աւելի նպաստաւոր պիտի ըլլայ քան այն զոր հիմա ընդունիլ կ'առաջարկուի ձեզի :

Անգլիոյ ոչ-Անկլիքանները սոյն երկու հարցումներուն գործնական պատասխանները կ'սպասեն ձեզմէ :

Զերդ անկեղծօրէն  
ՎԵՐՆԵ ՊԱՐՈՒՆԹ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՐՁԱԿՈՒՐԴ

ԴՊՐՈՑՆԵՐՈՒ փակուած և ամառնային տաքը արձակուրդի և հանգստեան խորհուրդներ կը բերին մեր միտքը : Լաւ է որ ամէն ով որ կրնայ պատրաստութիւն մը տեսնէ ասօրեայ գործերու սովորական ընթացքին մէջ զէթ կարճատեւ փոփոխութիւն մը ընելու համար : Գործատէրեր պէտք է որ յիշեն իրենց ծառայողներուն պէտքերը : Մեր քաղաքներու աղմուկին ու փոշիին

մէջ ապրող մարդիկ աշխատելու են քիչ մը ժամանակ լեռան կամ ծովափի մաքուր օդ անելու նոյն իսկ եթէ ընտանիքին միւս անդամները շարունակեն քաղաքը մնալ, կիներ ու տղայք գիւղի մը մէջ հանգստեան անխափան շրջան մը բոլորելու են: Մեր ընթերցողներէն շատին ամէնէն երանելի յիշատակներէն մին է անշուշտ յիշատակն իրենց մանկութեան այն օրերուն, զորս այգիի մը կամ լեռնային ամարանոցի մը մէջ անցուցին: Ի՛նչ երջանիկ և հոգերէ ի՛նչ զերծ էին այն օրերը: Ի՛նչ արտօժով կ'ուտուէին կերակուրները և ի՛նչ ուժով ու առողջ կը մեծնային տղաքը: Սոսկ ապրիլը անմահական հրճուանք էր:

Տիպար արձակուրդի պայմանն է տեսարանի փոփոխում, բացօդեայ կեանք, մտերիմ ընկեր, նորոգուած առողջութիւն ու զօրութիւն և կեանքի գործը լաւագոյնս կատարելու նախապատրաստութիւն: Արձակուրդը ինքնին ըլլալու չէ նպատակ: Լաւագոյն կեանքի և աշխատութեան միջոց է միայն:

Որքան և կարճ ըլլայ արձակուրդը, հոգ տարուելու է որ մտային մշակութեան պատեհութիւն մը դառնայ: Ուտեստի, անկողնի և անհրաժեշտ ուրիշ առարկաներու հետ պէտք է նաեւ առնել Աւետիքէր և ուրիշ թերթեր և գոնէ գիրք մը և Սբ. Գիրքը: Արձակուրդը սքանչելի պատեհութիւն կու տայ Սբ. Գրոց ուսման և աղօթքի, որ հանգըստեան շրջանին բուն սիրտը կազմելու է: Սակայն ուրիշ լաւ գրքի մը, զոր օրինակ պատմական, ուղեւորական կամ վիպական ընտիր գործի մը ընթերցումը շատ պիտի նպաստէ ընդարձակել մեր կեանքի հորիզոնը և աւելի շահեկան ու յարգի դարձնել բուն իսկ կեանքը:

Բայց շատերս պիտի զրկուինք արձակուրդ վայելելու այս արտօնութենէն: Մեր գործին բնական բերումով պիտի ստիպուինք աշխատութիւնը շարունակել ամառուան տաք ու երկար օրերուն մէջ առանց փոփոխման ոեւէ յոյսի: Բոլոր այսպիսիներու համար դաս մը կայ սորվելու այն եղանակէն որով կը բարախէ սիրտը: Բժիշկներ կ'ըսեն թէ սիրտը ամէն երկու բարախումի միջեւ շատ կարճ դադար մը կ'ընէ: Այդ դադարին կամ հանգստեան շնորհիւ կարող կ'ըլլայ այն իր գործը այնքան տարիներ շարունակել առանց ոեւէ երկարատեւ հանգըստեան և միանգամայն առանց յոգնութեան: Նմանապէս կրնանք մենք մեր կեանքին մէջ կազմել սրտի բարախումներու միջեւ հանգիստ ընելու ունակութիւնը և մեր ոյժը օր ըստ օրէ նորոգել մեր այլազան զբաղումներուն միջեւ կարճատեւ

բայց իրական դադարներ հաստատելով: Շատ անգամ ալ պատահած է որ մարդիկ իրենց տուներուն ու գործատեղիներուն մէջ անակնկալ և ցարդ չտեսնուած պատեհութիւններ գտած են հանգըստեան ու փոփոխման, ուսման և աղօթքի:

Ուստի Աւետիքէր երջանիկ արձակուրդ կը մաղթէ բոլոր իր ընթերցողներուն:

Յարենք նաեւ թէ կը փափաքինք որ մասնաւորապէս լաւ արձակուրդ վայելողներ Աւետիքէրի մէջ հրատարակման համար համառօտ նկարագրական մը զրկեն, որպէս զի ուրիշներ հազորդ ըլլան իրենց փորձառութեան և թերեւս թելադրութիւններ ստանան իրենց զալ տարուան արձակուրդին համար: Ուրախութեամբ պիտի հրատարակենք մէկ քանին ամէնէն շահեկան նկարագրականներէն որ մեզի կը զրկուին: Այդ յօդուածները պիտի ծառայեն ապացուցանել թէ Թուրքիա, ինչպէս անկեղծօրէն համոզուած ենք, բնապէս ամէնէն սիրալի երկիրներէն մին է ընակութեան համար, և սահմանուած է ըլլալ օր մը սիրական յաճախավայրը օտարագրի բաղմութիւններու, որ հոս պիտի գան հանգիստ և զուարճութիւն վայելել:

ՀԱՅՏԵՐԷՆ ԼԱՒԱԳՈՅՆ 100 ԳԻՐՔԵՐԸ

Անգղիերէն լեզուով և Եւրոպական ուրիշ զբոսաւոր լեզուներով հարիւր լաւագոյն գիրքերու ցուցակներ կան: Կարելի չէ ըսել թէ իրական միաձայնութիւն կայ այդ գիրքերուն ընտրութեան մէջ: Բայց կարելի է ըսել թէ գործնական համաձայնութիւն գոյացած է նկատմամբ այն գիրքերուն զորս մէկը կարողաւ է այդ լեզուներէն ոեւէ միով: Որչափ գիտենք, Հայերէն գիրքերու այդպիսի ցուցակ չէ պատրաստուած բնաւ: Հայերէն մատենագրութեան սահմանափակ ըլլալուն համար աւելի դիւրին ըլլալու է այդ հարիւրեակն ընտրել քան Անգղիերէնի մէջ: Այդպիսի ցուցակ մը օգտակար պիտի ըլլայ կարգ մը մարդոց, զոր օրինակ Հայերէն սորվող օտարականներու, դպրոցական և Գոսլէճական ուսանողներու, երկու սեռէ ինքնուսներու, տակաւ տակաւ անձնական գրատուն կազմող անհատներու և ընտանիքներու: Նոյն իսկ գրական մարդիկ պիտի օգտուին անկէ: Աւետիքէր կը փափաքի օգնել Հայերէն լաւագոյն գիրքերու այդ հարիւրեակին ընտրութեան և ցուցակին ամրաժամանակ: Այդ նպատակով իր ընթերցողներուն և ուրիշ բարեկամներու աջակցութիւնը կը խնդրէ:

Հարիւրեակի այդ ցուցակը պարունակելու է այն գիրքերը միայն, որ գրականութիւն կոչուելու արժանի են: Կրնան անոնք գրաբար կամ ալ

խորհարար ըլլալ, հեղինակութիւն կամ թարգմանութիւն, Սբ. Գրոց նման: Կրնան գրականութեան որեւէ ճիւղ ներկայացնել—բանաստեղծութիւն, արձակ, պատմութիւն, գիտութիւն, վէպ, կենսագրութիւն, աստուածաբանութիւն, եւն.: Բայց չինիչ ազգեցութիւն գործած ըլլալու են ազգային կեանքի մէջ, կամ կարեւորու են այդ կեանքը ոգեւորել ու ներշնչել ապագային մէջ: Բնականաբար անոնք կերպով մը Հայկական ոգին ի յայտ պիտի բերեն կամ լուսաբանեն: Այն գիրքերը պիտի ըլլան, զորոնք Հայ կեանքի ու Հայ մտածման, Հայ նկարագրի և ճակատագրի տեղեկանալ ուզող ոեւէ ոք անվրէպ պիտի ուրբարէ կարդալ: Տարբեր տարբեր անհատներ բնականաբար բաւական տարակարծիք պիտի ըլլան այդ ցուցակին մէջ ներփակելի գիրքերուն նկատմամբ: Սակայն եթէ քանի մը ցուցակներ կազմուին զանազան անձերու կողմէ առանց նախագոյն խորհրդակցութեան, և այդ տարբեր ցուցակներէն վերջնական ցուցակ մը պատրաստուի՝ ընդունելով այն գիրքերը որ քուէներու մեծագոյն թիւը շահած են, ըստ բաւականին աիպար ցուցակի մը համապատասխանող արդիւնք ձեռք պիտի բերուի:

Այս է ինչ որ Ա-Ե-Տ-Ա-Բ-Ե-Ր կ'ուզէ ընել: Մեր ընթերցողները և բարեկամները կը հրաւիրենք Հայերէն լուսագոյն գիրքերու հարիւրակի մը ցանկը կազմել և մեզի զրկել: Դրկուած այդպիսի ցանկերէն մենք ալ ուրիշ մը պիտի պատրաստենք վերոյիշեալ սկզբունքին հետեւելով: Օսմ. ոսկի մը պիտի տրուի այն անձին, որու պատրաստածը ամէնէն աւելի մօտենայ վերաքննեալ ցուցակին: Բոլոր ցուցակները մեզի հասած ըլլալու են մինչեւ Օգոս. 31:

Մեր նպատակն է լաւ գիրքերու ընթերցումը քաջալերել, և պէտք զգացուեցաւ գիտնալու նախ ոչ միայն լաւ գիրքերը, այլ, եթէ կարելի է, լաւագոյն գիրքերը: Վստահ ենք թէ այս ձեռնարկին մէջ բոլոր մեզի օգնողները մեծապէս պիտի վարձատրուին իրենց իսկ իմացական կեանքով և միանգամայն ուրիշ շատեր խրախուսելու և ոգեւորելու միջոց պիտի ըլլան: Ներկայ ժամանակիս վտանգը սա է որ մեր ժողովուրդը կը շատանայ լրագիր միայն կարդալով և ամբողջովին զանց կ'ընէ գիրք կարդալ: Լրագիրներու դէմ ըսելիք մը չունինք: Բայց անոնք գրականութիւն չեն: Առ հասարակ հասցեագրով կը խմբագրուին և հրատարակուած: օր մը ետքը կը հիննան: Լրագիրը մեզ վերահասու կ'ընէ աշխարհի իրադարձութիւններուն, նաեւ օրսուած հարցերու վրայ հանրային

կարծիքի կազմութեան: Սակայն ամուր ու կանոնաւոր տեղեկութեան համար, գրական ճաշակի մշակման և ուսանողական ունակութիւններու կազմութեան համար, գրականութեան բարձր հասոյքները ճանչնալու և գնահատելու համար, գիրք կարդալու ենք: Այս նիւթին վրայ կրնանք յետոյ լսուիլ և աւելի ընդարձակօրէն: Միեւնոյն ժամանակ կը ներկայացնենք զայն մեր ընթերցողներէն այնպիսիներու ուշադրութեան, որոնք կ'ուզեն մեզի օգնել՝ սորվելու համար թէ որոնք են ընթերցանութեան ամէնէն աւելի արժանի գիրքերը Հայերէն լեզուով, որ արդարեւ սքանչելի յարմարութիւն ունի գրական ամէն նպատակներու համար և անսպառ ճոխութիւն մը ինքնայատուկ քաղցրութեան և արտայայտութեան:

**ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ**  
ԳՈՒՐՍԱԿ ԿԵՑՈՂՆԵՐՈՒՆ

Քրիստոնեայ եզիր զգուշանալու համար հակագործունէութեան կեանքիդ վրայ յառաջ բերելիք գէշ արդիւնքէն: Այո, այս ճշմարտութիւն է: Մարդկային ազգին կրօնական պատմութեան մէջ ոչ մէկ բան այնչափ որոշ իրողութիւն է՝ որչափ Յիսուսի ազգեցութեան մարդոց միտքերուն, սիրտերուն և հոգիներուն վրայ ունեցած մեծ զօրութիւնը: Ան շատ մը պատանիներու մտաւոր քնացող կարողութիւնները արթնցուցած է: Տաքցուցած ու այլասէր ըրած է բերաւոր սիրտեր, որոնք առեն մը սառած էին ու եսասէր: Ան կաղացող կամքերու մէջ երկաթ խառնած է: Բայց Քրիստոնեայ եզիր նաեւ ուրիշ մէկու մը սիրոյն: Այս կոչը կրնայ ինչալ խուլ ականջներու վրայ՝ այնպիսի առեն մը երբ մարդկային յարաբերութեանց բոլոր շրջանակներուն մէջ, կրօնական և մարդասիրական յանձնառութեանց մէջ, հասարակական ամէն տեսակ գործերու մէջ, մէկու մը իր զրացիին համար պատասխանատու ըլլալը ժամուանացախօսն է: Ա՛լ իր անձին համար միայն ապրիլ անկարելի կ'ըլլայ մէկու մը որ իր հոգիին մէջ մարդկութեան կայծ մը ունի: Ուրեմն մասնաւորապէս նկատողութեան առ թէ դուն ի՞նչ կրնաս ընել:

Դուն կրնաս մէկու մը ձամբուն վրայ արգելք ըլլալէ զադրիլ: Թերեւս կայ մէկը, որուն վրայով դուն բոլորովին անտեղեակ ես, որ Քրիստոսի իրեն ուղղուած կոչը չսեղու կու տայ ու գԱյն մարդոց առջեւ չխոստովանիր, որովհետեւ դուն ալ նոյն կերպով կը վարուիս այդ կոչին դէմ: Այս տեսակէտով դուն բարոյապէս որչափ ազէկ ըլլաս՝ այնչափ աւելի քար գայթակղութիւն կը դառնաս:

Բայց ընդհակառակը, եթէ դուն գիծը անցնիս՝ օրինակդ կրնայ օգտակար ըլլալ այնպիսի մէկու մը որ կը տատամսի : Քրիստոնէական պատմութեան մէջ բազմաթիւ օրինակներ կան, որոնք կը ցուցնեն թէ մարդիկ յաճախ զոյգ զոյգ կու գան երկինքի թագաւորութիւնը, զոր օր. Պետրոս և Անդրէաս, Յակորոս և Յովհաննէս, Փիլիպպոս և Նաթանայէլ, եղբայր եղբօր հետ, բարեկամ բարեկամի հետ, դրացի դրացիի հետ, դպրոցընկեր դպրոցընկերի հետ : Ինչո՞ւ թեւդ չանցնես ուրիշի մը թեւին ու այդպէս չառնես այդ ամենակարեւոր քայլը :

Դուն կրնաս շինել նկարագիր մը, որ մինչ տարիները կ'անցնին՝ կրնայ ազդարար լոյս մը ըլլալ շատերու, այնպէս որ յարմար ատենին ուրիշները նային քեզի և ըսեն. «Տեսէ՛ք այդ մարդը ո՞րչափ փոխուած է. հիմա լեզուն կը զսպէ. հիմա փորձութեանց մէջ որձաքարի մը պէս կը կենայ : Ո՞րչափ համբերատար, մաքուր, ազնուամիտ ու անեսասէր է :» Մեծ ու ներշնչիչ գործ կայ անոր համար որ իր կեանքը, բոլոր սիրտով ու հոգիով, ընել կ'ուզէ այնպիսի կեանք մը զոր մենք Քրիստոնեայ կը կոչենք : Այդ կեանքը որչափ որոշ այնչափ դժուար է, որչափ իրական՝ այնչափ վարձատրիչ է : Դուն կրնաս այս ուղղութեամբ ամէն օր աւելի ճամբայ կտրել, հոգ չէ թէ ամուսին կառապան մը ըլլաս կամ մեծ գործարանի մը վարչական սենեակին մէջ ընկուզենի՞է գրասեղանի մը առջեւ նստիս :

Դուն կրնաս Քրիստոնեայ եղբայրութեան ոգին տարածել : Մենք մէջը գտնուողներս մեղադրելի ենք. մեզմէ ոմանք նեղմիտ են : Ոմանց կրնայ թերեւս յարմարիլ այն գիտողութիւնը զոր Լոնտոնցի յայտնի քարոզիչ մը ըրաւ իրեն ծանօթ սարկաւազի մը մասին, «Ան շատ ազէկ մարդ մըն է՝ բայց ոչ ոքի յիշեցնել չուզեր զՅիսուս Քրիստոս :» Բայց դուն, և քեզի պէս ուրիշներ, որ հիմա դուրսն էք, կրնաք Քրիստոնեայ հաւատացեալներու խումբ մըն ալ ներշնչել : Երբեմն նորադարձ Քրիստոնեայի մը կեանքին մէջ է բոլոր եկեղեցիի մը կեանքը փոխելու գաղտնիքը : Այնպիսի մէկը աններդաշնակութեան սերմեր կրնայ ցանել, կամ այնպիսի մէկու մը գալը կրնայ նմանիլ Աստուծոյ բլուրներէն եկած զեփիլոսի մը գալուստին, որ անուշահոտութիւններով բեռնաւորուած է : Դուրսը կենայու և մեր թերութիւնները քննադատելու տեղ՝ ներս եկուր և օգնէ որ եկեղեցին աւելի մաքուր, աւելի սուրբ, աւելի ազատամիտ և աւելի զօրաւոր ըլլայ, ինչպէս Քրիստոս պիտի ուզէր որ ըլլար ան :

Դուն կրնաս օգնել նոր երկիր մը ստեղծելու :

Ամէն տեղ կը տեսնենք լիշտ մը կամ բռնութիւն մը : Աստուած հրեշտակներու դունդեր չղրկեր հին սխալները ուղղելու համար, կամ սանձահարելու համար մեր դարուն չարիքին ապերասան ընթացքը : Ան կը սպասէ այնպիսի մարդոց որոնց մէջ դրած է այն զօրութիւնը որով կարող պիտի ըլլան զախարհ նորոգել և Քրիստոսի իտէալներով վերաշինել : Փա՛ռք Աստուծոյ, հոս հոն կը տեսնենք էրիկմարդոց և կիներու խմբակներ որոնք կը մեծամարտին չարիքին հետ, բայց անոնք շատ ու շատ սակաւաթիւ են : Անոնք նոր ոյժ ու կորով ստանալու համար նոր օգնականներու պէտք ունին : Դուն չե՞ս լսեր, ով իմ դուրսը կեցող բարեկամս, այն օգնութեան փողը որով մարդոց համար պէտք կը յայտարարուի : Պիտի չուզե՞ս միանալ այն արի հոգիներուն, որոնք Աստուծոյ Որդիին կը միանան երբ ան կ'երթայ պատերազմելու համար :

ԼՈՒՍԱՅԱՐԱՐ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ

Աշխարհ չի է հերոսութիւնով : Բայց մեզի համար դժուարութիւնը պէտք եղած ժամանակը և աշխատութիւնը տալ ու զանոնք գտնելն է : Եթէ կարդայինք անոնց իրական վիճակին մասին, ու հասկնայինք թէ ի՞նչ են անոնց հերոսական գործերը՝ զթութեան ու համակրութեան արցունքներ պիտի թափէինք յաճախ : Բայց որովհետեւ շատ անգամ անոնք մեզի այնչափ սովորական դարձած են՝ անոնց գործերուն հերոսական կողմերը չենք տեսներ : Ժամանակի և միջոցի հեռաւորութիւնը այս տեսակ գործերու երբեմն մասնաւոր դիւթանք մը կու տայ կարծես : Այս մեղմացուցիչ միջոցներով է որ գործին զեղեցկութիւնը կը տեսնենք ընդհանրապէս, և մանրամասնութիւններով չենք հետաքրքրուիր :

Միտիս Հոլմէն շարաթը մէկ անգամ կու գար մեր լուացքը ընել : Մենք շատ կը զարմանայինք անոր այդ արծաթասիրութեան համար. որովհետեւ ան էրիկ և քանի մը գաւակներ ունէր որոնք աղուոր ամսական կ'առնէին : Բայց նորէն ալ այս կինը լուացքի ու արդուկի գործ կ'ընէր և ամենօրեայ մասնաւոր գործ ալ ունէր : Ան 17 տարեկան դուստր մը ունէր : Պէրթա փափկակազմ աղջիկ մըն էր, որուն ճերմակ շրջագոյնտը զինքը տեսնող բոլոր աղջիկներուն հիացում ու նախանձ կը պատճառէր :

Կը յիշեմ լսած ըլլալս խօսակցութիւն մը այն ցանկապատին ետեւէն ուր լաթերը կը փռէին : Մէյրին, մեր քովի դրացիին սպասուհին, մէկը կը քննադատէր : Միտիս Հոլմէնի ձայնն ալ լսուեցաւ :

նոյն պահուն զօրաւոր ու յստակ, ձեռն չ պատճառ կայ որ կին մը ձգէ որ իր էրկան մասին այդպէս խօսին: Կարծեմ իմ ձոնս ալ իր թերութիւնները ունի: Այո, կրնայ ունենալ՝ քանի որ մարդ է, բայց ես զանոնք երբեք տեսած չեմ: Բայց եթէ երբեք այն այնչափ թերութիւններ ունենար որչափ փուշեր ունի ոգնի մը՝ ոչ ոք պիտի համարձակէր իմ քով անոնց մասին խօսիլ: Ես այդպիսի մէկու մը վայել և յարմար դաս մը պիտի տայի:»

Միս Ալիսըն Գերմաներէնի մասնաւոր դասեր կու տար: Միսիս Հոլմէն Գերման ծագում ունէր: Օր մը ուսուցչուհիին գնաց և ըսաւ, «Պիտի փափաքէի որ Պէրթայի Գերմաներէն դաս փայլք: Ան դպրոց չկրնար երթալ, Եւ այս իր վերջին տարին էր բարձրագոյն վարժարանին մէջ: Եթէ դուք կըրնայիք յարմարցնել, պիտի ուզէի որ ամէն օր ժամը 11ին տունը գտնուէր և...» հոս կեցաւ Միսիս Հոլմէն, արդեօք ինչ կրնար ըսել առանց յայտնելու իրենց ընտանեկան ծախքերուն անբաւականութիւնը, «... և աղէկ է որ բան մը չըսուի այս մասին մեր ընտանիքին անդամներէն որեւէ մէկին: Անոնք իրենց չգիտցած մէկ բանէն շատ չեն վըշտանար: Բայց ես պիտի հոգամ ձեզի վճարուելիք դրամը: Ես ձեր լուացքը ու արդուկը պիտի ընեմ և ձեզ միշտ մաքուր պահելու պիտի աշխատիմ:»

Պէրթա սկսաւ իր դասերուն. ան շատ շուտ կը սորվէր: Շատ անգամ երբ ան մաքուր ու արդուկուած զգեստներ հագած կը նստէր գրատունին մէջ՝ անոր մայրը վերը տնական գործերու տուած էր ինքզինք բոլոր սիրտով:

Երբեմն մենք երեւոյթները և վիճակները չենք հաւնիր: Բայց ատոր համար է որ մենք բան մը իր բոլոր պարագաներովը չենք գիտեր:

Կամաց կամաց իմացանք թէ ինչպէս Պէրթա տուն կը փութար, իր գործի զգեստները կը հագնէր և շորս անօթի մարդոց կերակուր կը պատրաստէր: Իմացանք թէ ինչպէս Գերմաներէնի դասագիրքերը կը պահէին որ տունին այս էրիկմարդիկը չգանգատէին թէ «կիները իրենց պէտք չեղած բաները սորվելու ետեւէ էին» և «յիմարական բաներու համար ժամանակ ու դրամ կը վատնէին»:»

Աստիճանաբար իմացանք նաեւ թէ ինչպէս մայր և աղջիկ կէս գիշերուան ժամերուն պզտիկ ննջասենեակի մը մէջ քով քովի նստած գիրքեր կը կարդային: Աղջկան կրթուելու և իր ապրուստը շահելու ջերմ փափաքը, և մօրն ալ զայն այդ վիճակին հասցնելու բաղձանքը՝ այս բոլորը իրաց բնա-

կան բերումով մը, յաջողապէս գրուած վէպի մը դարձուածներուն պէս մեղի յայտնուեցան:

Վերջապէս իմացանք, բայց ոչ թէ Միսիս Հոլմէնէ, թէ ան իր ամուսնական կեանքին առաջին օրէն ի վեր բնութեան տակ կ'ապրէր, թէ ան ստիպուած էր անձամբ շահիլ իրեն և Պէրթայի համար ծախսուելիք գումարները, ինչպէս նաեւ աղջկան կրթութեան համար պէտք եղած դրամը:

Բայց նորէն ալ մտիկ ըրած էր մեր շատախօսութիւններուն երբ կը բարձրանէինք զայն իբրեւ կծծի, և համբերած էր մեր զինքը իբրեւ արծաթաօտէր ամբաստանելուն: Ան սիրով համբերեց որ մենք զինքը սխալ հասկնանք ու դատենք քան թէ իր ամուսնին և զաւակներուն մասին այդ անհաճոյ ճշմարտութիւնը իմանանք: Ու այս վիճակին համբերած էր երեսուն երկար տարիներ — երկարող աստապանք մը որ երթալով աւելի կը շարժի: Ինչ հերոսութիւն կրնայ գերազանցել զայս, — իր հանգիստը ու ընկերական զիրքը զոհել պաշտպանելու համար պատիւը մարդու մը զոր «սիրել» ու «յարգել» խոստացած էր:

Եթէ մենք զիրքի մը մէջ հանդիպէինք անոր այս հերոսութեան՝ շատ փայլուն ասութիւններով ու շատագովութիւններով պիտի դովէինք զայն. բայց որովհետեւ ամէն օր մօտէն կը տեսնէինք զայն, մեր աչքերուն առջև սովորական մարդոց աստիճանին կ'իջնար ու հասարակ տեղիք մը կը դառնար, իբրեւ լուացարար պարզ կին մը:

Ճէյն Բ. Պէյր»

**ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ**

ՀՆԴԿԱԿԱՆ ԱՓՈՒՆԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

(Թայմ)

Չինաստանի մէջ ափիոնի խնդիրը անսովոր վիճակ մը ստացած է, ինչպէս որ յայտնի էր Շանհայէ և Պոմպայէ զրկուած այն լուրերէն, զորոնք հրատարակեցինք շաբաթ օր: Հնդիկ վաճառականները Շանհայի մէջ ունին ափիոնի մեծաքանակ մթերք մը, որ 6,000,000 Անգղ. ոսկի կ'արժէ: Անոնք 1911ի Մայիսին կատարուած Ափիոնի Պայմանագրութեան համաձայն իրաւունք ունին իրենց այդ մթերքէն զրկել Չինաստանի քանի մը նահանգները, բայց անպատշաճ կերպով կ'արգելուին տեղական մանտարիներուն կողմէ: Բայց միեւնոյն ատեն Մանչու հարստութեան Հակափրոնական Հրովարտակը ա'լ դադրած է իր ազդեցութիւնը ունենալէ և Չինական այդ մեծ երկիրը նորէն կ'իջնայ խաչխաչ տիրապետութեան տակ: Հընգկաստան Չինական կառավարութեան վստա-

հեցաւ, բայց Չինու կեդրոնական իշխանութիւնը իր նահանգներուն վրայ ունեցած իշխանութենէն շատ բան կորսնցուց : Քանի որ Չինական Կառավարութիւնը անկարող եղած է խաշխաշի մշակութիւնը դադրեցնելու իր յանձնառութիւնը կատարել, 1907ի և 1911ի ափիոնի պայմանագրութիւններն ալ մեռեալ տառ են : Բայց Հնդկաստանի ափիոնի վաճառականները նոր խնդիր մը յարուցած են որ շատ կը շուարեցնէ Հնդկական Կառավարութիւնը : Անոնք իրենց այս հեռագրական ստիպողական դիմումը Սիմլա քրած են անցեալ ուրբաթ : Անոնք Հնդկական Կառավարութիւնէն չեն պահանջեր որ Չինաստանը ստիպէ իր պայմանագրութիւնները գործադրելու համար : Այդպէս անկարելի պահանջ մը չընելու չափ աղէկ գիտեն Չինաստանի վիճակը : Անոնք կը պահանջեն որ Հնդկ Կառավարութիւնը դադրեցնէ ափիոնի առաքումը Չինաստան, ու ա՛լ ափիոն չվաճառուի այդ երկրին : Անոնք այդ կերպով կը յուսան անտարակոյս իրենց Չինաստանի մէջ դիզուած պատրաստ միջերը սպառել և ասկէ ետքը զիբինք կործանող այդպիսի մեծ վնասի մը հաւանականութեան տակ չմտնել : Ահա ասոր համար Հնդկ Կառավարութիւնը ուշադրաւ դիբք մը ունի Չինաստանի Կառավարութենէն, Անդրոյ Հակափիոնական Ընկերութիւններէն և ափիոնի Հնդկ վաճառականներու կողմէ եղած միաձայն պահանջներու առջեւ գտնելով ինքզինքը . քանի որ, ինչպէս քսինք, այս վերջինները իրենց պատրաստ միջերքի սպառումը դիւրացնելու համար նոր առաքումներու դէմ են : Այն պատճառները որ այս պահանջներուն ծագում կ'ու տան՝ յայտնի կերպով տարբեր են իրարմէ, բայց նորէն ալ անոնց բոլորը մէկէն կը կազմեն շատ կարեւոր պահանջ մը : Բայց Հնդկ Կառավարութիւնը ընթացիկ տարուայ իր ելեմտացոյցին մէջ ափիոնէ 3,500,000 Անգլ. ոսկի հասոյթ մը կ'սպասէ և այդ գումարին մէկ մեծ մասը Չինու մէջ սպառելիք ափիոնէն կ'ակնկալուի : Բոլոր տարուան ելեմտացոյցին մէջ ալ 1,500,000 Անգլ. ոսկիի հասոյթի առաւելութիւն մը կը սպասուի : Եթէ ափիոնի Չին արտածումը արգելուի՝ ներկայ տարուան ելեմտացոյցը, սպասուած հասոյթի առաւելութիւնը չունենալէ դատ, նոյնչափ գումարի բաց մըն ալ կրնայ ունենալ : Ուրեմն ի՞նչ ընելու է Հնդկաստանի ելեմտական նախարարը :

Պէտք է յիշել թէ 1907ին վերջը Չինաստան աշխարհ զարմացուց յայտարարելով թէ իր սահմաններուն մէջ խաշխաշի մշակութիւնը և ափիո-

նի սպառումը Արքայական Հրովարտակին արգելի տրամադրութեանց ենթակայ են : Նոյն առեւ Հնդկաստան հաւանեցաւ Չինաստան արտածուած ափիոնի տարեկան քանակը ամէն տարի  $\frac{1}{10}$  նուազեցնել, այնպէս որ Հնդկական ափիոնի առեւտուրը Չինաստանի հետ տասը տարիէն վերջնայ : Նուազումի այս աստիճանը Չինաստանը հաճեցնելու աստիճան արագ չէր, և պահանջ մը եղաւ զայն աւելցնելու : Հիւպատոսական պաշտօնակալներ և մասնաւոր քննիչներ միացան վկայելու թէ, թէեւ խաշխաշի մշակութիւնը բոլորովին անհետացած չէ, բայց շատ մեծ սեղմումներու ենթարկուած է : Ասոր համաձայն 1911ի Մայիսին Մեծ Բրիտանիա հաւանեցաւ որ Հնդկաստան Չինաստան ափիոն արտածելէ դադարի 10 տարիէ նուազ ժամանակամիջոցի մը մէջ, եթէ Չինաստանցիներ կարենան ցուցնել թէ «տեղական ափիոն»ի արտադրութիւնը բոլորովին դադրած է : Նաեւ համաձայնութիւն գոյացաւ որ Հնդկական ափիոնը ընաւ չըրկուի Չինական այն նահանգները, ուր ա՛լ սպառի դադրած է «տեղական ափիոն»ի մշակութիւնը : Ծանկայի և Քանթոնի նաւահանգիստները բոլորովին արգիւտեցան ներածութեան այս նւթը ներմուծելէ, որովհետեւ ասոնք էին Հնդկական ափիոնը Չինաստան ներմուծող գլխաւոր նաւահանգիստները : Այս համաձայնութեան իրրեւ արգիւնք Յիշուանի մեծ նահանգը, ուր նախապէս շատ խաշխաշ կը մշակուէր և մեծաքանակ Հնդկական ափիոն կը սպառէր, մինչեւ վերջին Սեպտեմբեր ամիսը դոց պահուեցաւ Հնդկական ափիոնի ներածութեան դէմ : Յետոյ եկաւ Չինական յեղափոխութիւնը, որուն արգիւնք եղաւ քառասուն վիճակ մը և իշխանութեան ակարացումը : Երկու ամսուան ընթացքին Յիշուանի մէջ նորէն սկսաւ խաշխաշի մշակութիւնը և միւս «դոցուած» նահանգներն ալ սկսան անոր օրինակին հետեւիլ : Այսօր, Հնդկական թերթերու մէջ տրուած տեղեկութենէն դատելով, Չինաստան մինչեւ հիմա մշակածէն շատ աւելի խաշխաշ կը մշակէ : Չինաստանի վիճակին մօտէն տեղեկակ շատ քիչ մարդիկ ասկէ տարբեր բան մը պիտի ակնկալէին : Այն բնական էր Կայսերական Հրովարտակը կշիռ ունենալէ դադրեցաւ և իւրաքանչիւր նահանգ ինքն իրեն համար օրէնք մը եղաւ՝ ափիոնի առատ հունձք մը ունենալու փորձութիւնը շատ հրապուրիչ եղաւ : Չեքիանի տեղական զինուորական կառավարիչը կ'ըսէ թէ երկրագործներու գործին խառնուելէ կը վախնայ, Կ'երեւակայինք թէ շատ մը տեղացի պաշտօնակալներ խառնուիլ չեն ուզեր, որովհետեւ

էին առնեները իրենք ալ միշտ կը մասնակցէին արտադրուած հասոյթին բաւական խոշոր բաժին մը առնելով: Երկրայիս համար, յայտնի է թէ, Միջին Թագաւորութեան մէջ երեւան եկած բարոյական յեղափոխութիւնը անպատուաբար խաւարում մը ունեցած է:

Կը կարծենք թէ մէկ կէտի վրայ շատ աղէկ պիտի համաձայնի թէ՛ Հնդկաստանի թէ՛ ալ Անգղիոյ հասարակաց կարծիքը: Թէև Չինական Կառավարութիւնը անկարող եղած է իր բաժինը կատարել իր այդ յանձնառութեան մէջ, բայց նորէն ալ Հնդկական ափիոնի առեւտուրը պէտք է դադարի: Բայց խնդիրը սա է — Ե՞րբ պէտք է դադարի: Մեզի կրեւայ թէ իրաց այս վիճակին մէջ Հնդկի վաճառականներ լսելի ըլլալու իրաւունք մը ունին: Անոնք տարիներէ ի վեր զբաղած են առեւտուրով մը գոր կառավարութիւնը օրինաւոր ճանչցած է, և որ դաշնադրութիւններով հաստատուած է, մինչեւ իսկ պատերազմով ընտադատուած: Վերջին տարիներս անոնց Կառավարական ափիոնի վճարած բարձր գինը այդ վերջին երկու Համաձայնութեանց վրայ գրուած յոյսին վրայ հաստատուած էր: Առեւտրական շատ հասարակ հաշիւ մըն էր գիտնալ թէ որչափ որ Հնդկական ափիոնը նուազէր Չինաստանի մէջ՝ նոյնչափ ալ գինը վրայ պիտի գնէր: Հնդկական Կառավարութիւնը հասոյթի մեծազուժար առաւելութիւն մը կ'ունենար, զոր կը գործածէր կրթական և առողջապահական նպատակներու համար եղած պարտքերու հատուցումին: Այս բարձր գինը վճարած էին այն բնական համոզումով թէ անցեալ տարուան Պայմանադրութիւնները պիտի գործադրուէին: Չինաստան զայն երկու անգամ բեկանած է, և մինչ այդ գոցուած նահանգները խաշխաշի մշակութիւն կ'ընեն աղատապէս՝ Հնդկական ափիոնը չընդունելի մինչեւ իսկ նախապէս գոցուած չնչակուած նահանգներու մէջ, Եթէ Մեծ Բրիտանիա Հնդկական ափիոնի ներմուծման իր իրաւունքին վրայ պնդէ՝ վաճառականները արտոնջալու պատճառ մը չպիտի ունենան: Մեծ Բրիտանիա այսպէս չկրնար ընել՝ որովհետև Չինաստանի մէջ կեդրոնական կառավարութիւն մը չկայ որ իր այս իրաւունքը յարգել տալ կարենայ: Հիմա վաճառականները յուսահատութիւն Հնդկական Կառավարութեան կը ինդրեն որ Չինաստան զրկուելու համար աւելի ափիոն չի ծախէ: Անոնց տեսակէտը յայտնի է: Աւելի վաճառումներ գիները պիտի կտորնան: Եթէ ափիոնի առեւտուրը այժմէն գաղղբցուցով՝ գոնէ իրենք ըզվերնին զիջուած մեծաքանակ մթերքը սպա-

ռելու ժամանակ պիտի ունենան: Եթէ Կարկաթայի մէջ վաճառումները շարունակուին՝ իրենք պիտի կործանին: Վաճառականներու այս պահանջը իր ամէնէն գորաւոր համակիրները ունենալու է այս երկրին հակափոխական ընկերութեանց մէջ: Դիտենք թէ առաջին անգամ նկատողութեան առնուելիք շահը վաճառականներունը չէ, այլ Հնդկաստանինը ընդհանրապէս: Եթէ վաճառումի շարունակումը գիներու անկում մը յառաջ բերէ՝ Հնդկաստան շատ քիչ շահ մը պիտի ունենայ, մինչդեռ վաճառականները պիտի ճգմուին: Հնդկական Կառավարութիւնը իրեն սեփական մեծաքանակ ափիոն ծախեց շատ բարձր գինով, կոթնելով Պայմանադրութեան մը՝ որուն գործադրութիւնը հիմա չկրնար երաշխաւորել: Ան իր շահը ուրախութեամբ զրպանեց, բայց կործանումէ չկրնար ազատել զանոնք որ իրեն վստահեցան:

ՅՈՎ ՀԱՆՆԵՍ ՅՈՎ ՀԱՆՆԻՍԵԱՆԵ  
ՔԱՆԻ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

[Տարակոյս չկայ թէ Օսմ. Սահմանադրութեան հոչակումէն ի վեր Ռուսահայ թերթեր ու գիրքեր բաւական ծաւալած են Թրքահայոց մէջ, քանի որ հին րէժիմի կաշկանդումները ալ պատուար չեն քաշեր Հայութեան այս երկու ստուար հատուածներուն գրականութեան միջև: Եւ կ'արժէ ալ որ Հայութեան այս երկու հատուածները աւելի մտտեան իրարու ամէն առիթներով երբ համազգային աօնախմբութիւն մը, Յոգելեան մը կը տօնուի, կամ երբ ազգին պատուաբեր մէկ գաւակին արժանիքը կը գնահատուի Որովհետև սահմանէն անդին ու ասդին շատ բաներ կան հասարակաց ու ամէն Հայի համար կարեւոր ու օգտակար Պէտք է նաև Հայ միտքը, սահմանին երկու կողմերն ալ, գիրքով ու թերթով մշակէ այնպիսի գրականութիւն մը, որ Հայը պատկերացնէ և նպատակ ունենայ ազգային միութեան ու զարգացումին ծառայելու:

Այս նկատումով կը վախաքինը Աւետիսեան ընթերցողներուն երբեմն ճաշակներ տալ Ռուսահայ գրականութեան: Այս առիթով ընտրած ենք քանի մը քերթուածներ Ռուսահայ բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանէ, որուն Յոգելեանը տօնուեցաւ մօտերս էջմիածնայ մէջ: Փարիզէ Տիար Արշակ Զօպանեան Բիւզանդիանի 4,761, 4762 և 4,763 թիւերուն մէջ գրած «Յուսատու ճայն մը» գեղեցիկ յօդուածով յաջողապէս ի վեր կը հանէ Յովհաննիսեանի գրական տաղանդն ու արժանիքը:]

ԽԲ. Աւետիսեան

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ

Ամէն անգամ երբ թերթում եմ  
 ես էջերը Սուրբ Գրքի,  
 Միշտ վշտացած մտածում եմ—  
 Ո՛ւր է օէրը մարդերի,  
 Որ Փրկիչը սուրբ կտակով  
 Մարդկութեանը աւանդեց,  
 Խաչի վերայ իւր արիւնով  
 Գիր կենդանի դրոշմեց:

Մարդիկ վաղուց մոռացել են  
 Խաչն ու քարոզ կենդանի,  
 Աւետարանն ուրացել են,  
 Էլ Սուրբ Գիրքը գին չունի.  
 Ամենայն գիրք միշտ կարդում են,  
 Սիրոյ գիրքը չըկամին.  
 Ո՛ւր, չը գիտեմ, որոնում են  
 Բախտը իրանց խեղճ կեանքին . . .

ՄԱՅՐՄ

Հոգեմաշ ցաւով այմենայն գիշեր  
 ես քուն եմ մտնում արտասուքն աչքիս,  
 Եւ խուն երամով տանջող պատկերներ  
 Շուտ պաշարում են տառապելու հոգիս . . .  
 Մենակ ապրեցայ կարօտ զգուանքի,  
 Փորձով ես ուսայ խորհուրդը կեանքի,  
 Օրըս սեւացաւ այրող կրքերից,  
 Չը գտայ երբեք մի սիրտ կարեկից,

Եւ քուն եմ մտնում ամենայն գիշեր  
 Արտասուքն աչքիս, հոգեմաշ ցաւով—  
 Հանգիստ չեն տալիս սեւ սեւ պատկերներ,  
 Ու պաշարում են ինձ խուն երամով . . .  
 Եւ ահա դու ես որ ինձ այդ պահուն  
 Երեւում ես, մայր, պսակով զարդարուն.  
 Դու գրկում ես ինձ սիրով կաթովին,  
 Գոչում ես՝ «Որդի՛» ձայնով անմեկին:

Եւ Տեանում եմ ես քո փշեայ պըսակ,  
 Խոցերով ծածկուած քո սիրուն ճակատ,  
 Եւ մի թախանցիկ նուրբ չըզարչի տակ՝  
 Կուրծքիցըդ հօտոզ արիւնը կաթ-կաթ:  
 Աչքդ աղբբալիր տեանում եմ վերաս,  
 Կանչում եմ քեզ «Մայր» ես ձայնով նըւազ,  
 Եւ կրկին կնում անքուն, վշտահար—  
 Ախ, մայր, ի՞նչ անէ որդիդ քեզ համար . . .

ԽԱՉԻ ՆԵՐՔՈՅ

Գիշերուան այս սեւ, ահալի խաւար  
 Չը վշտեցնէ թող քեզ, իմ եղբայր .

Վառ աւետարեր օրուայ է նշան  
 Այդ արշալուսի ընկերն անբաժան:

Չէս տեսել, ի՞նչպէս մոայլ փոթորկին  
 Յաջորդում է միշտ լուսազեղ երկին,  
 Եւ քաղցըր ժպտով արեւը պայծառ  
 Գգում է կրկին սար, դաշտ ու անտառ . . .

Խաչիդ տակ ճնշուած դարձեալ դու յուսա—  
 Փրկութեան քո ժամն անշուշտ պիտի գայ.  
 Արեւ՝ մը ներկուեցաւ առաջ Գողգոթան,  
 Ապա թէ ծագեց սուրբ օրն յարութեան:

ՀԱՅՐԻ՛Կ . . .

Փոթորկին անցաւ. ասնում եմ ահա  
 Պայծառ արեւի ծագումն հրաշափառ.  
 Աւետեայ հրեշտակն իջաւ մեզ վերայ,  
 Եւ նոր առաւօտ բայ է մեզ համար:

Երկար տանջուեցանք. որպէս սեւ գիշեր  
 Խաւար էր պատել մեր բիրտ սրտերին.  
 Վայելինք նոր օր—ահա ջինջ եթեր  
 Լցում է ըտըմամբ մի կղեմային:

Վարդերն ինձ այսօր ժպտում են անոյշ,  
 Սոխակին դայլայլ հնչում է քաղցրիկ . . .  
 Ախ, այս ի՞նչ յոյզ է, որ այսպէս քնքոյշ  
 Շոյում է հոգիս,—յո՛յզ չընաշխարհիկ:

Մարած է սեւ կիրք, լըռել է նախանձ.  
 Եղբայր — ձայնում եմ ես իմ թշնամուն . . .  
 Ո՛՛ թէ երկնային այս զգացումն անոնց  
 Տէր մընար յաւէտ ամէնիս հոգուն:

Մի անուն միայն, մի քաղցրիկ անուն  
 Թող մեզ բոլորիս շողկապէ սիրով—  
 Հայրի՛կ . . . Նազելի և թովիչ հնչուն,  
 Համակ անհուն սէր և համակ գորով:

ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ

ԲԱԺԻՆ

«ԱԶԳ. ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆՆ՝ Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ»  
 Բ.

Հայ. Եկեղեցին ի շնորհս Աւետարանի՝ ազգային  
 գրականութեան ծնունդ տուաւ, գիր ու դպրու-  
 թիւն պարգեւեց Հայուն: Նախաքրիստոնեայ — հե-  
 թանոս Հայը ոչ գիր ունէր, ոչ ազգ. գրականու-  
 թիւն: Մեր քաղաքական է՛ն փայլուն չրջանին մէջ  
 իսկ գրական նշանի մը չենք հանդիպիր. մինչ ու-  
 բիշ ազգեր ճօխ և ծաղկեալ գրականութիւն ունե-  
 ցած են, որք իրենց փառացի անցեալին հոյակապ

յիշատակարաններն ու յաւերժական կոթողներն հազար են : Այն հիմնական և զօրաւոր յեղաշրջումը որ ազգային ինքնագիտակցութիւնը պիտի զարթոցանէր և ինքնատիպ զարգացումի պիտի առաջնորդէր մեզ . Հայ տառերու գիւտումը էր որ պիտի արդիւնաւորուէր և զոր բացարձակապէս կը պարտինք Աւետարանին : Վասն զի առանց Հայ լեզուի սեփական նշանագրերու՝ Սբ. Գիրքը հայցնել և ժողովուրդին զիւրամտաչելի ընծայել, եկեղեցւոյ վարդապետներուն համար յոյժ դժուարին և անհնարին ըլլալով, սոյն դժուարութիւնը հարթելու և Գրիստոնէութիւնը տեւական և ընդհանրական ընելու անշէջ եռանդն՝ որ կը լափէր Հայ տառերու անմահ հեղինակին, Մեսրոպայ սիրան ու հոգին, պատճառ եղաւ այսպիսի միտք մը յղանալու, ինչ որ վերջապէս յաջողեցաւ ի զլուսի հանել յետ այնքան տաժանակիր տքնութեանց և զոհարեութեանց, յօժարակամ օժանդակութեամբն հոյանուն հայրապետին, Սահակայ և առատաձեռն օգնութեամբն Վոսմապուհ բարեսէր թագաւորին : Գրի գիւտը յաջողած էր : Այժմ աւելի ընդարձակ գործ մը, այն է Սբ. Գրոց թարգմանութիւնը ի յայտ կու գար : Այս գործն ևս ի զլուսի հանեցին սոյն երկու մեծ անձնաւորութիւնք՝ օգնական աշխատակից աշակերտներու հետ, և բաւ չհամարելով Սբ. Գրոց թարգմանութիւնը մէկ կողմէն ձեռնարկեցին ինքնատիպ հեղինակութիւններու, զրելով եկեղեցական կանոններ, աղօթքներ, շարականներ — թանկագին գոհարներ տոհմային ոսկի գրականութեան — և միւս կողմէն շարունակեցին թարգմանել Յոյն և Ասորի եկեղեցական հայերու գրուածները : Հայաստանի ամէն կողմերը հետզհետէ հաստատուեցան կրթարաններ ուր պիտի ուսանէր ազգ. մանկտին ոչ միայն մայրենի լեզուն, այլև Յոյն, Ասորի ու Պարսիկ լեզուները : Տեղական միջոցներով ալ չբաւականանալով՝ ընտրեցին յառաջադէմ աշակերտներէն վաթսուհի չափ և զրկեցին կեսարիա, Հոովմ, Բիւզանդիոն, Աղեքսանդրիա, Եդեսիա և Աթէնք, յորս ծաղկեալ էին արուեստք և գիտութիւնք, զարգանալու համար զանազան ուսման ճիւղերու մէջ, և կատարելագործելով ու գիտութեան առատ պաշար ամբարած պիտի դառնային հայրենիք, ժիր մեղուներ, աւետարանի ճշմարտութեան մեղրը ընծայելու Հայ քիմքերու, հայրենասէր հոգիներ, վառուած բորբոքած՝ ազգին ծառայելու բուն սեննով . . . : Ահաւասիկ այսպէս Հայ գրականութեանը կը ծնէր Եկեղեցւոյ ծոյն, որ պիտի լուսաւորէր համատարած Հայաստանը բարոյական և իմացական լուսով, պարզեւելով մե-

զի դարուց ի դարս հոյակապ հանճարներ — անմահ Սահակ, անձնդիր Մեսրոպ, իմաստասէր Եղնիկ, հմտակից Կորիւն, անյաղթ Դաւիթ, պատմարան Խորենացի, հայրենասէր Եղիշէ, Ղազար, Մամբրէ, փառքը ոսկի դարուն, լուսաշող համաստեղութիւնը Հայ մատենագրութեան : Յայնմ ժամանակի երանելի, ցանկալի աշխարհն Հայոց անպայման սքանչելի լինէր» (Կորիւն) : Եւ յաջորդաբար եօթներորդ դարուն՝ Կոմիտաս, տասներորդին՝ Նարեկացին, տասներկորդին՝ Շնորհալին, իւրաքանչիւրն օժտուած մաքի և հոգւոյ բարձրագոյն, ազնուագոյն ձիւքերով, արթուն հսկողներ, ժիր մշակներ Աւետարանի անդամատանին, բարոյական սիւններն ազգութեան և գրաւականներն ազգային գոյութեան պահպանումին : Առանց այս յեղաշրջութեան որ կատարուեցաւ Աւետարանի շնորհիւ, Հայ ազգն իր լրութեամբը պիտի կլանուէր անտարակոյս, մեր քաղաքական իշխանութեան բարձումին հետ, Պարսիկ տիրապետութեան սև անդունդին մէջ անյիշատակ : Եւ աւա՛ղ, եթէ տգիտութիւնն ու շարակամութիւն, հեռ ու նախանձ և երկրին քաղաքական ողբալի կացութիւնը չլլատէին անոնց թոյնքն արծուաթեւ, ա՛հ, Հայաստան իսկապէս պիտի լինէր նախանձելի և «հանուրց հիւսիսականաց վեհագոյն» (Խորենացի) :

«Հայերը — կ'ըսէ Էմէ-Մարթէն — յաջողեցան իրենց հաւատքին հետ փրկել նաեւ իրենց ազգութիւնը, մերժելով կիրառութիւնը օտար ազգաց տառերու, որոց գործածութիւնը կրնար զիրենք վարժեցնել կամաց կամաց Զրադաշտական վարդապետութեան, կամ յարարեութեան մէջ դնել Յունականին հետ, և վտանգել ազգային ինքնուրոյն գոյութիւնը . . . » Արդ, պարտ է միանգամ ընդ միշտ ընդունիլ թէ, քանի որ ազգ մը գոյութեան իրաւունք ունի միմիայն իր լեզուաւն ու գրականութեամբը, և ըստ որում մեր գիրն ու գրականութիւնը եկեղեցւոյ պարգեւն է, ուրեմն Հայ ազգը էր գոյութեանը կը պարտէ Հայ եկեղեցւոյն :

(Շարունակելէ) ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԻ ԵՂՈՒՅԵԱՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԺԶ.

Երկնիւնէ Կաթալիքի-Բիւնը երկրէ վրայ : (2)  
 Ասկէ առաջ գրուած մեր հինգ յօդուածներով նկատողութեան աւինք Երկինքի թագաւորութիւնը, անոր վայրը, անոր իշխանը, անոր հպատակները և անոր օրէնքները : Ա՛լ կ'ուզենք այս շարքը վերջացնել քանի մը բացատրութիւններ տալով և թերագրութիւններ ընելով :

Անյաղն բարեացական-իւտեմք մարդիկ: Օպըրըին Համալսարանին Փրոֆէսոր Էտուըրա Պազուըրթի՝ 1911ին(\*) Կ. պոլսոյ մէջ գումարուած Ուսանողաց Համալսարանային Քրիստոնէական Դաշնակցութեան ժողովին մէջ յայտնեց քանի մը գաղափարներ, զորոնք կը փափաքիմ մէջ բերել հոս Անցուցնելէ ետքը թէ Աստուած անձ մըն է եւ որ արժանի նպատակի մը մը համար անյաղթելի բարեացականութեամբ մը կը գործէ,» հարցուց թէ ի՞նչ է Աստուծոյ «էական փառասիրութիւնը» կամ նպատակը: Մենք կրնանք զայն գիտնալ տեսնելով թէ դարերու երկար շարքին մէջ ի՞նչ բանի համար գործած է ան. կամ ի՞նչ բաներ ըրած է: «Կեանքի երկար եղափոխութեան մէկ ուսումնասիրութիւնը մեզի կը սորվեցնէ թէ Աստուծոյ փառասիրութիւնը եղած է անյաղթելի բարեացականութեամբ իմաստուն ու զօրաւոր մարդկային ցեղի մը գերազանցութիւնը ապահովելու» . . . «Յիսուս Քրիստոս Աստուծոյ էական փառասիրութեան մարդկային կեանքի մը մէջ արտայայտութիւնն է: . . . Ան իր անձին վրայ կը ներկայացնէ այն անյաղթելի բարեացականութիւնը որ ազդու գործունէութեան կը փոխուի:» Ոչ միայն այսչափ, այլ «ան յաւիտեանապէս մարդկային մտածութեան առջեւ զբած է տեսլապատկերը այն քաղաքակրթութեան, որ օր մը գործադրութեան պիտի դրուի անյաղթելի բարեացականութեամբ իմաստուն ու զօրաւոր մարդկային ցեղի մը կողմէ: Ան տեսլապատկերն է քաղաքակրթութեան մը, որուն մէջ իւրաքանչիւր ազգէ իւրաքանչիւր մարդ ըլլոր ազգերու ըլլոր մարդոց համար պիտի բաղձայ որ պատեհութիւն ունենան ըլլոր բարի բաներու համար, ինչպէս եղբայր մը պիտի բաղձար իր եղբոր համար: Գործով ու բարեկամութեամբ զօրաւոր մարդիկ պիտի լեցնեն զաշխարհ: Անոնք պիտի կատարեն աշխարհի ըլլոր տարբեր տեսակ գործերը Աստուծոյ եղբայրսէք զաւակներուն ուղիով: Աշխարհի քաղաքակրթութիւնը պիտի ըլլայ քաղաքակրթութիւնը այնպիսի բարեացական աշխատանքներու, որոնք մեծ թափով կը յառաջանան ուժեղապէս տիրելու համար Բնութեան, քանի որ անցեալ ըլլոր ձեռնարկներ ուրիշ բաներ չէին եթէ ոչ ասոր մէկ ստուերը»

(\*) «Կրնանք զԱստուած տեսնել ու Անոր հետ հաղորդակցիլ:» Կ. պոլսոյ մէջ գումարուած Ուսանողաց Համալսարանային Քրիստոնէական Դաշնակցութեան Տեղեկագիրը Ունենալու համար դիմել՝ 124 East 28 th., St:New York: Գինն է 9 դահ. : Ծ. 6.

Այս հիանալի ու հոյակապ գաղափարական մը չէ՞ որ իւրաքանչիւր բարի մարդ կը ներշնչէ Աստուծոյ հետ գործելու և այս յոյժ բաղձալի քաղաքակրթութիւնը յառաջ բերելու:

Սերոյ օրէնքը «անհորձնական» է: «Այո» կրնայ ըսել մէկը, «Սիրոյ Օրէնքը հիանալի գաղափար մըն է, բայց անգործնական է: Եթէ ես հնազանդիմ անոր՝ մինչ ուրիշներ չեն հնազանդիր, այն ատեն ես պիտի տառապիմ: Երբ ես անոնց հետ ուղղամըտօրէն վարուիմ՝ մինչ անոնք ինծի և ուրիշներու հետ անուղղամիտ կերպով կը վարուին, ես չեմ կրնար ապրուստս շահիլ: Եթէ ըլլոր մարդիկ ջանային եղբայրաբար ապրիլ՝ այն ատեն ես ալ սիրով պիտի ուղէի այդպէս ապրիլ, բայց ներկայ պարագաներու տակ այդ անկարելի է:» Բայց ձեզի յիշեցնեմ թէ երբ Ապտ իւր Համիա կ'իջխէր թուրքիոյ վրայ և երբ կը կարծուէր թէ անոր բռնապետութիւնը անխախտ կերպով հաստատուած է՝ մարդիկ լուռ ու մունջ չնստան ու չըսին, «Անգործնական է, անկարելի է բան մը ընել:» Ոչ մեծ վտանգներու, նեղութիւններու և սարսափներու մէջ աշխատեցան փոփոխութիւն մը յառաջ բերելու համար: Շատեր մինչև իսկ իրենց կեանքերը զոհեցին, որ, եթէ երբեք չկարհնան իսկ տեսնել ազատութիւնը, զոհէ ուրիշներ իրենցմէ յետոյ տեսնեն զայն ու վայելեն: Ուրեմն, Երկինքի Թագաւորութեան քաղաքացիները պէ՞տք է փախուստ տան տառապանքներէ՝ երբ տառապիլ պէտք ըլլայ այս օրհնեալ քաղաքակրթութիւնը բերելու համար ներկայ հասմուտութեան, յափշտակութեան, թշուառութեան և եղբայրատեցութեան տեղ:

«Այն ատեն ճշմարտութեան կողմը բռնել ազնիւ գործ մըն է, երբ անոր կեղեկանքներուն բաժնեկից կ'ըլլանք, և երբ անոր դատը պաշտպանել շահ ու պատիւ չբերեր և ուղղամիտ ըլլալը բարօրութիւն չերաշխատէր:»

Առանց ուրիշելու ընելիքին կամ չընելիքին սպասելու՝ ամէն մէկս մեր անձերուն համար անմիջապէս որոշենք այդ եղբայրասիրական կեանքը ապրիլ, որոշենք թէ «անյաղթելի բարեացականութեամբ» անձ մը պիտի ըլլանք: Հոս կամ հոն ուրիշներ ալ, այս կեանքին գեղեցկութիւնը տեսնելով մեր վրայ, պիտի աշխատին իրենց անձերուն համար Եւ այսպէս, աստիճանաբար Երկինքի Քաղաքակրթութիւնը պիտի ներմուծուի աշխարհ:

Քրիստոնէայ Ընկերակալան

ԿՐԾՆՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

13.

9. Մի քանի մանրադեղեր, դեղեր ու մեղքեր-մեներ: Ասկէ առաջ մի քանի անգամներ ըսինք թէ կրօն-քը գիտութեանէն բոլորովին զատ բան մը նկատե-լու չէ, այլ անոր մէկ մասը, իբրբայ լրացուցիչը: Այժմ՝ այս վերջին յօդուածովս կ'ուզեմ մի քա-նի մանրադեղեր և դեղեր պատմել և դիւրըմ-բրանելի ձևով վերջացնել գրութիւնս(\*):

Կեանքի մէջ փոթորկալի, ճգնաժամային ժա-մանակներ կան. յայնժամ ո՞րը աւելի օգնութեան ու մխիթարութեան կը հասնի. կրօնքը թէ գի-տութիւնը: Մահուան շուքի ձորին մէջ մարդուն սիրաբ խաղաղեցնող ու մութիւն մէջէն լոյս և յոյս սփռող ո՞րն է:

Անկրօն ըլլալու դժուարութեանը կրօնաբէր ըլլալու շար-տելի է: Աշխարհ հիմա Քրիստոնէից ջանքերովը կերպարանափոխ եղած է: Գրեթէ անոր ամէն մա-տին մէջ, խաւարագոյն երկիրներն իսկ, կրօնի ու-սուցումներով և անպատմելի օրհնութիւններով լեց-ուած են: Ասոր զուգահեռական ի՞նչ կրնայ ցու-ցադրել անկրօնութիւնը. կրնայ ցուցնել մէկ հատ երկիր մը զոր բարեարտութեանէ վեր վերցուցած է: Ո՞ր անկրօններուն խումբը մարդկութեան ցա-ւը մեղմացնելու համար հիւանդանոցներ, աղքա-տանոցներ, անկեղանոցներ, ծերանոցներ շինած է. կարօտին օգնութեան հասած, թշուառը մխիթա-րած, վշապցեալին արցունքները սրբած, մահամեր-ձին սնարին քով անոր քաջակերական մը խօսելու կարողացած է: Ո՞ր անկրօններու խումբը անօթի-ին հաց տուած, արկածեալներու օգնութեան ձեռք երկնցուցած է: Ոչ մէկ օրինակ կայ: Անհաւա-ար կը նստի տունը, իր հպարտութիւնը սնուցա-նելով և վանդակելով Աւետարանը որուն հաւատա-րը չի կրնար տալ:

Եօթը հարցումներ կ'ուզողինք որեւէ անհաւատի. անոնց ի՞նչ պատասխան կրնայ տալ: (1) Կըր-նա՞ս ըսել թէ բոլոր Սրբիքը ու շաղրութեամբ կարդացած ես, և կրնա՞ս քննութիւն տալ անկէ: (2) Դուն, ինչ մաս որ կարդացիր, աւելի անոր մէջ սխալ-ներ գտնալու նպատակաւ չէ՞ր. որ կարդացիր՝ քան թէ խնարհութեամբ ճշմարտութիւնը պրպտելու համար: (3) Անոր տեղը մարդկութեան աւելի օգտա-

կար ըլլալու համար ի՞նչ գիրք դնելու մտադիր ես: (4) Աշխարհիս բարոյական կառավարութեան մէջ ե-ղած անհաւատարմութեանց պատճառը ի՞նչ ըլլալ կը կարծես: (5) Աշխարհիս անհաւատներուն ապեր-ջանիկ մեռնելուն համար ի՞նչ կ'ըսես — զոր օր.— Վոյթէն, Րուսօ, Հիւմ, Թովմաս Փէյն, եւն: (6) Շատ անհաւատներու անբարոյական կեանք ունենա-լուն վրայ ի՞նչ հաշիւ կու տաս: (7) Ինչո՞ւ Քրիս-տոնէութիւնը աշխարհիս օգտին համար շատ աւե-լի մեծ բան ըրած է քան անհաւատութիւնը, եթէ երբեք սշխատած է:

Ժամանակաւ Գաղղիացի անկրօն մը Քրիստո-նէութիւնը հիմնայաբար ընել որոշած էր, և իր սխիթեմը հաստատել խորհեցաւ՝ յուսալով թէ ան քիչ ատենէն Յիսուս Քրիստոսի հիմնած կրօնքէն ա-ւելի նախապատուութիւն պիտի չահէր: Անոր բո-լոր ակնկալութիւնը և աշխատանքը յուսախարու-թեան մատնուեցաւ:

Անկրօն մը մեռնելու մօտ էր, և թող արուե-ցաւ որ բարեկամները իր մահուան անկողինն բո-լորտիքը շրջապատեն: Բարեկամները միաձայն թե-լաղրեցին, «Ամուր բռնէ, տեղի մի տար»: Մահա-մերձը ըսաւ «Ահ, ամուր պիտի բռնէի, եթէ ըրո-նելիք բան մը ունենայի, բայց ի՞նչ ունիմ»: Այս ի՞նչ հակապատկեր է աղքատ մեռնող Քրիստոն-եայ մարդու մը որ աշխարհը կը ձգէր խաղաղու-թեամբ և յոյսով: Երբոր անոր հարցուցին թէ վախ ունի՞. նա պատասխանեց, «Վա՛խ, ինչո՞ւ պիտի վախնամ. մեղաւոր մը կրնայ ընկղմիլ անկործա-նելի վէժին վրայ»:

Ժամանակին մի քանի հարուստ զբօսաշրջիկ-ներ Փարիզ այցելեցին. անոնցմէ մին հոն հիւան-դացաւ: Երեւելի բժիշկ մը կանչուեցաւ, նաեւ բժիշկէն խնդրուեցաւ որ լաւ հիւանդապահ մը յանձնարարէ: Բժիշկը հիւանդապահի մը անունը տալով ըսաւ, «Եթէ զայն կրնաք բերել, ինքզինքնիդ բարեբախտ սեպեցէք, քանզի անիկա բարձր դա-սակարգի ժողովուրդի մէջ կ'աշխատի ու շատ վըս-տահութիւն չահած է»: Հիւանդին ընկերը անմի-ջապէս կառք մը վարձելով հիւանդապահին գնաց, ու բարեբախտարար ան ալ տունն էր: Հիւանդա-պահէն խնդրեց որ շուտով պատրաստուի հիւան-դին տունը երթալու: Հիւանդապահը ըսաւ, «Նե-րեցէք պարոն, ճամբայ չելած բան մը դիտնալ կ'ուզեմ. ձեր հիւանդ բարեկամը Քրիստոնեայ է»: «Այո, շատ լաւ, բարեպաշտ մէկն է. բայց հաճե-ցէք ինձի ըսել թէ ի՞նչ պատճառաւ այս հարցումը ըրիք. հիւանդին Քրիստոնեայ ըլլալը կամ չըլլալը ի՞նչ տարբերութիւն կ'ընէ հիւանդապահին»: Հի-

(\* ) Թէեւ մտադիր էի մի քանի կէտերու վրայ ալ գրել, բայց միեւնոյն վերնագրի տակ յօդուած-ներու շարքը շատ չերկարելու համար կը վերջա-ցնեմ:  
Մ. Յ.

ւանդապահը պատասխանեց. «Պարոն, Վոլթէոփ վերջին հիւանդութեան ատեն անոր ծառայող հիւանդապահը ես էի. բոլոր Եւրոպայի հարստութիւնն ալ տան, ես անգամ մը եւս անհաւատի մեռնիլը տեսնել չեմ ուզեր»:

Փաստաբան մը 16 տարեկան մէկ հատիկ աղջիկ մը ունէր: Այս աղջիկը տունին ուրախութիւնը և երջանկութիւնն էր: Փաստաբանին կինը շատ Գրիստոնեայ ըլլալով աղջկան կը սորվեցնէր Աբ. Գիրքէն և կ'ըսէր թէ փրկութեան ճամբան միայն Գրիստոս է: Իսկ փաստաբանը անհաւատ ըլլալով աղջկան կը պատուիրէր թէ մօրը խօսքերուն և Աբ. Գիրքին չհաւատայ: Աղջիկը հիւանդացաւ և օր մը հօրը ըսաւ, «Հայր, ես մեռնելու վրայ եմ, կ'ուզեմ որ հոգիս փրկուի, ինչ ընեմ որ փրկուիմ. քու ըսածներդ հետեւիմ թէ մօրս ըսածներուն»: Այս քաջ մարդը խորապէս զգածուեցաւ, երեսը գոցեց, զլուխը ծռեց, սկսաւ խորհիլ: Գիշ մը ետքը աղջկան դեղնած ձեռքը համբուրեց, մինչ աչքերէն հեղեղներ կը վազէին, և լրջօրէն ըսաւ, «Սիրելի աղջիկս, մօրդ ճամբան բռնէ»:

Նարդէոնի համար կը պատմուի թէ, երբոր հոչակաւոր անհաւատ մը (Մարշալ Տուրոք) անգամ մը շատ անհաւանական պատմութիւն մը կը խօսէր և իր գաղափարն ալ կը յայտնէր զայն հաստատելով, Նարդէոն անոր սա զիտողութիւնը ըրաւ, «Երբեմն մարդիկ կան որ ամէն բանի կըրնան հաւատալ, բայց ոչ Աբ. Գիրքի»:

Անհաւատ Հիւմի մայրը Բրիստոնէութեան ուսուցիչ էր. իր որդւոյն եռանդոտ յորդորներով ինքն ալ սկեպտիկ եղաւ. տարիներ անցաւ, ինքը մահուան դռներուն մօտեցաւ. իր վերջին օրերը իր որդւոյն զրեց. «Սիրելի որդիս, առողջութիւնս փճացաւ, շատ տկարացած եմ. երկայն չպիտի ապրիմ. յուսահատ ստեղծ քու փիլիսոփայութիւնդ ինծի մխիթարութիւն մը չտար: Ես անյոյս և անոք ձգուած եմ. միտքս կը խորասուզուի խոր տխրութեան մէջ: Կ'աղաչեմ, շուտով տուն եկուր զիս մխիթարել, կամ գոնէ ինծի զրէ մահուան ժամուս փիլիսոփայութեան տալիք երջանկութիւնները, զորոնք առաջ իմ Աբ. Գիրքս կու տար ինծի և դուն զայն ձեռքէս առիր»:

Այս նամակը անպտտասխանի մնաց:

Անգղիոյ Կարոլոս Ա թագաւորին աղջիկը Իշխանուհի Էլիզապէթ Վէյթ կղզիին Նիւ Փորթ եկեղեցիին մէջ թաղուած է: Վերթորիա թագուհին անոր մարմարինէ արձանը կանգնել տուաւ շատ սրտառուչ ձեւով մը: Արձանը կը ցուցնէ Էլիզապէթ Իշխանուհիին մահուան ժամուն ունեւ

ցած դիրքը և զգայուժը: Էլիզապէթ իր հօրը նեղութեանց ատեն Քէրսպրուք բերդին մէջ բանտարկուած էր: Բանտին մէջ երկար հիւանդութիւն քաշեց. հոն մինակ էր, պատանեկութեան բոլոր ընկերներէն և հաճոյքներէն հեռու, և իր վիշտերուն մէջ կը հառաչէր մինչեւ մահուան դար: Թագաւորական ճոխութեամբ պատանեկութիւնը անցնող Իշխանուհի Էլիզապէթ օր մը բանտը իր անկողինին մէջ մեռած դտնուեցաւ, իր Աբ. Գիրքը առջեւը բաց ու մատները սա համարին վրայ դրուած ու ստոած, «Եկէք ինծի, բոլոր յոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ պիտի հանգչեցնեմ»:

Վերթորիա թագուհիին շինել տուած մարմարեայ արձանը ճիշդ այս դիրքը կը ցուցնէր: Ինչ սրտաշարժ տեսարան:

Այն մարմարինէ արձանը խրատատու մըն է: Անոր առջեւէն անցնողներուն կարծես կ'ըսէ. «Հարստութիւն և պատիւ չեն կրնար քեզ երջանկացնել. Յիսուս միայն հոգին կը կը յագեցնէ: Եթէ կեանքի և մահուան մէջ, այս աշխարհիս և զալիքին մէջ կ'ուզես ճշմարտապէս երջանիկ ըլլալ, Յիսուս Բրիստոսի մէջ եղած ճշմարտութիւնը դիտնալ ու անոր հաւատալ ջանա»:

Հեռուները չերթանք, դեռ մի քանի շարթիներ առաջ աշխարհիս բոլոր գիտական հնարքներուն ու յաջողութիւններուն մարմնացումը ըսուելու արժանի «Թէ՛նա՛նէ» շոգենաւին մէջ ամէն տեսակ մարդիկ կային, հարուստ աղքատ, գիտուն տգէտ, հաւատացեալ և անհաւատ: Անոր մէջ ամէնն ալ ինքզինքնին ապահով և երջանիկ կը զգային: Անընկղմելի, անկործանելի կը նկատէին զայն: Ինչ մեծ յուսախարութիւն, սակայն, դեռ առաջին նաւարկութեան հազիւ կէսին հասած, ովկիանոսի մէջ սարնակոյտի մը զարնուեցաւ և ընկղմելու դատապարտուած 1,500 հոգիներով կորսուեցաւ առ յաւէտ: Կ'աղաչեմ, ըսէք ինծի, սա 1,500 հոգիներուն մահուան մօտ քաջաւիրութիւն և մխիթարութիւն տուողը ո՞վ և ի՞նչ էր: Ո՞ր անկրօնին խրատը, ո՞ր անհաւատին երգը, ո՞ր փիլիսոփայութեան իմաստասիրական խօսքն էր: Մահուան մօտ կրօնքին պարզեւած մխիթարութիւնը ո՞վ կրնայ պատմել: Նուազածուներուն վերջին ու լաւագոյն եղանակը՝ աշխարհիս մնաք բարեաւի երգն էր հետեւեալը:

Ալ մօտ ըլլամ, ով Տէր, ալ մօտ քեզի,  
 Թէեւ ճամբաս ըլլայ դառն, ցաւալի,  
 Միշտ աղօթեմ պիտի, ալ մօտ ըլլամ քեզի,  
 Ալ մօտ քեզի:

Սանդուխ մը հոն տեսնեմ, քովէդ իջած,

Անթիւ սուրբ հրեշտակներ վրան ալ կայնած,  
Որ աչք ընեն ինծի, ալ մօտ ըլլամ քեզի  
Ալ մօտ քեզի :

Երբոր ուրախ թեւով ես վեր թռչիմ,  
Աստղէն ու արեւէն երբոր անցնիմ,  
Հոգիս երգէ պիտի, ալ մօտ ըլլամ քեզի,  
Ալ մօտ քեզի :

Երեւակայնցէք անգամ մը, մահուան մօտ սա  
երգին խօսքերէն աւելի սփոփանք ներշնչող ինչ  
կրնայ ըլլալ : Անդին ջուրերուն վրայ ազատաբար  
նաւակին մէջ այլեւայլ կրօններու վերաբերող,  
մարդիկ — կարելի է մէջերնին անհաւատներ ալ  
կան — միացած «Հայր մեր» աղօթքը կ'ընեն :

Եկէք, ով աշխարհիս իմաստունները, զիտուն-  
ները, փիլիսոփաները, ձեզի հետ խորհրդածենք,  
կեանքի անակնկալներուն ու ալեկոծութեանց ա-  
տեն սրտի սփոփանք տալու ուրիշ աղբիւր ու  
միթարութիւն մը ունի՞նք : Թէ որ մարդարէու-  
թիւններ խափանին, թէ որ լեզուներ զաղարին,  
թէ որ գիտութիւնը խափանի, ինչ պիտի ըլլայ մար-  
դուն վիճակը : Կարեւորագոյն խնդիր :

«Մարմնոյ վարժութիւնը քիչ բանի օգտակար է,  
բայց Աստուածպաշտութիւնը ամէն բանի օգտա-  
կար է, որ թէ՛ ներկայ և թէ՛ ապանի կենաց  
խոստումները ունի :»

«Պիղծ ու պատուական առասպելներէն ետ կե-  
ցիր, և քու անձդ Աստուածպաշտութեան վարժե-  
ցուր :»

«Անզգամը իր սրտին մէջ ըսաւ թէ Աստուած  
չկայ, ապականեցան ու պիղծ գործեր ըրին :» «Ամ-  
բարիշտը իր երեսին ամբարտաւանութեանը հա-  
մար զԱստուած չփնտռեր :»

Ատաբազար Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ  
Վ Ե Բ Զ

ԱՒԵՏԱՐԱՆԶԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ  
ԴԵՊ Ի ՔԻՒՐՏԻՍՏԱՆ

Տեղւոյս, Մ. Ազիզի, Տաճկաստանի Ընդհ. Աւե-  
տարանչական Միութիւնը նախապէս յարմար սե-  
պեց աւետարանիչ մը գտնել և խրկել այն տեղերն,  
ուր կարօտ կը քաշեն Աստուծոյ խօսքին և փա-  
փաքով կ'ուզեն լսել Աստուծոյ պատգամաւորին :

Եւ ահա առջի վիճակը ստորագրեալիս ինկաւ :  
Ես յարմար սեպեցի երթալ մեր առաքելական դաշ-  
տը՝ Քիւրտիստան, Հաւանութիւն ստանալով պատ-  
կանած եկեղեցիէս, Միութեան Գործակից և Գոր-  
ծադիր Ժողովներէն ճամբայ ելայ Գերմանացի

Շվէսթըր Փաւլինէի հետ, քանի որ ինքն ալ այդ  
կողմերը այցելել կը փափաքէր :

Մ. Ազիզը կեղրոն սեպելով, ճամբայ ելանք  
ներկայ տարուան Ապրիլ 12ին երեքշաբթի օրը,  
Նախախնամութեան բարի դուշակութիւնով անձ-  
րեւն ալ մեզի հետ ելաւ և քիչ բացառութեամբ  
չարունակեց մինչեւ մեր վերադարձը : Երեք օրէն  
հասանք Տիգրանակերտ՝ հնութեանց քաղաքը : Տէրը  
մեզ առաջնորդեց Տէրիքի երէցին որդւոյն, Էլիաս  
էֆ. Ոտարանեանի, տունը, ուր սիրով հիւրընկալ-  
ուեցանք չորս օրեր :

Հոս Տիգրանակերտի մէջ տեսակցեցանք տեղ-  
ւոյն Բողոք. եկեղեցւոյն երէց Վեր. Յովհան Սի-  
նանեանի հետ, Հոս գտանք նաեւ Վեր. Թովմաս  
Մկրտիչեանը, Թարգման Անգղիական հիւպատո-  
սարանի Իր կինը՝ Տիկ. Եսթեր յուսալից գործ մը  
սկսած էր տեղւոյն Հրէից մէջ, Հոս հանդիպե-  
ցանք նաեւ Պր. Ղազար Տէր Ղազարեանին, որ իր  
գործին նուիրեալ մարդ մըն է : Սա Թարգմանած և  
յօրինած է Բրդերէն շատ մը հոգեւոր երգեր, ո-  
րոնք յաճախ լսեցինք որ կ'երգուէին մեր գացած  
տեղեր : Հոս միայն մէկ անգամ պատեհութիւն ու-  
նեցանք քարոզելու և այդ ալ կիրակի առաւօտ մը :  
Մեզի ընկերացող Գերման օրիորդն ալ կանանց  
ժողովին առաջնորդեց : Մեր այցելութեան երկ-  
րորդ տեղը եղաւ Գըթրպըլ : Այցելեցինք տեղ-  
ւոյն երեցին Վեր. Սէլիմին : Պատուելին Արաբե-  
րէնով կը քարոզէր : Իր գործին վրայ ընդարձակ  
տեղեկութիւն մը չուէեցանք : Հոսկէ, փոխանակ  
Փարիսինի, ուր նպատակ ունէինք երթալու, ա-  
ռաջնորդուեցանք Տէրիք, Տիգրանակերտէն 16 ժամ  
դէպի հարաւ արեւելք, Հոս ալ օգտակար ժողով-  
ներ ունեցանք : Մտադրած էինք միայն մէկ օր  
մնալ, բայց տեղւոյն եղբայրները ստիպեցին որ  
գէթ կիրակիէն առաջ չբաժնուինք, ուստի պար-  
տաւորուեցանք մնալ, Տէրը օրհնեց իր խօսքին  
քարոզութիւնը, Կային որ գժտուած ըլլալով երեք  
տարի կար ժողովարանը չէին եկած, ասոնք Աս-  
տուծոյ Հոգիէն յանդիմանուած զղջացին և հաշ-  
տուեցան և անգամ մըն ալ եկեղեցին առնուեցաւ :  
Տէրիք թէեւ փոքր աւան մըն է, բայց բազմատմաբ  
ուրիշ տեղերու՝ հարուստ է յարանուանութիւն-  
ներով, Հոս կան Լուսաւորչականներ, Կաթոլիկ-  
ներ, Սիւրեանի Կաթոլիկներ, 25—30 տուն Բո-  
ղոքականներ, եւն. : Տարագին Գրդական է. չորս  
լեզուներ կը խօսին, Հայերէն, Քուրդերէն, Արա-  
բերէն և Թուրքերէն : Այս տեղ հինգ օրեր գոր-  
ծեցինք մեր կրցածը ընելով : Շվէսթըր Փաւլինէ  
ալ կանանց ժողովին առաջնորդեց, Կիրակին հա-

ղորդութիւն կատարեցինք և մկրտեցինք 10 մանուկներ և վեց նոր անդամներ եկեղեցի ընդունուեցան: Պէտք է և հոս յիշել թէ մեր Տաճկաստանի Ընդհ. Աւետ. Միութիւնը Աւետաբերի մէջ երեւցած «Սբ. Գրքը Աստուծոյ խօսքն է» յղուածաշարքը Եփրատ տարածման մէջ տետրակի ձեւով տպած էր և 100ի չափ մեղի յանձնած էր հատը 20 փարայի ծախելու համար, և բաւական սպառեցինք: Տէրը սոյ որ օգտակար ըլլան, Ափսոս որ աւելի շատ թուով մեր հետ չափինք այդ տետրակներէն զորոնք ամէն տեղ կրնայինք բաժնել փափաքող հասարակութեան մէջ: Հոգեւոր, շինիչ, ժամանակի ներկայ պահանջները լեցնող դրականութեան մը շատ պէտք կայ ներկայ մասնաւանդ երիտասարդներու՝ միտքը սնուցանելու և լուսաւորելու համար, զի հակառակ կողմէն հաւատքը քանդող գրքեր և տետրակներ պակաս չեն:

Երկուշաբթի վերադարձանք Տիգրանակերտ Ալ Ֆարսին երթալու խորհուրդը ձգեցինք: Ջորեպան բռնելով Գլխաւորի մի ուրիշ տեղը, Հայնի, դացինք, Ջորեքաբթի հասանք Հայնի ու առաջնորդուեցանք Պ. Յովհաննէս Պատմաճեանի տունը, որ մեր նախկին բարի հիւրընկալներուն նման մեզ սիրով ընդունեց: Այս տեղ նշանաւոր է. որովհետեւ վերապատուելիք Մարտիրոս և Ստեփան Շմաւոնեաներու ծննդավայրն է: Հոս ժողովները թէեւ նախապէս պաղ երեւցան, բայց երթալով տաքցան և ոգեւորեցան: Կիրակի մեծ բազմութիւն մը եկած էր ունկնդրել Աստուծոյ ճշմարտութեան: Երկար ատեն մնայուն պաշտօնեայ մը շունչնայնուն համար, հոգեւորապէս շատ մնասուած էին: 60 տունէ աւելի Բողոքականներ կան հոս: Այս տեղը կեդրոնէ հեռու ըլլալուն համար հոգեւոր պաշտօնեայի մը պէտքը շատ ստիպողական է: Տեղւոյն ժողովուրդը մեծ փափաքով կը փնտեն յարմար պաշտօնեայ մը որ հովուէ և առաջնորդէ զիրենք Աստուծոյ ճշմարտութիւններուն մէջ: Հոս Բողոքականներ ունին իրենց երկսեռ դպրոցները 100 աշակերտներով, Լուսաւորչականք ունին 300 երկսեռ աշակերտներ որոնք կը խնամուին երեք ուսուցիչով և մէկ վարժուհիով: Սական դպրոցնին նախանձելի վիճակ մը չունի: Կիրակի ժողովարանին մէջ եղած պաշտամունքներէն ետքը, իրիկուան եկեղեցին այցելեցինք, հոնտեղի պաշտաման ներկայ գտնուելու համար:

Հայնի ալ մեր կրցածը ընելէ, զանոնք մխիթարելէ և քաջալերելէ ետքը երկուշաբթի բաժնուե-

ցանք իրենցմէ, հակառակ իրենց կիրակի մը եւս հոն կենալու թախանձանքին, և անկէ մեկնեցանք Տպնի Երկուշաբթի իրիկուն հասանք Տպնի Հոս գտանք մեր Սբ. Գրքոց կարգի գասընկերներէն Պ. Համբարձում Սարաճեանը որ երեք տարիէ ի վեր հոս կը պաշտօնավարէ: Հոս գտանք օրինակելի ժողովուրդ մը, որոցմէ առաքելական դարու եկեղեցիներու հոտը կու գար: Հոս 15 տուն Բողոք. և 100 տուն Լուս. կան, բայց բոլորն ալ հաւատքով սիրով լեցուն են և կ'ապրին հաւատքի և աղօթքի կեանք մը:

Տպնի մեկնեցանք և այդ օր հասանք Փիրան, որ բարոյապէս և մտաւորապէս շատ ինքն վիճակ մը կը ներկայացնէր: Քանանայ չունէին, եկեղեցիին դուռը գոց էր և իրարու հետ անհաշտ էին: Միւս օր Արզնի և հինգշաբթի Ջերմուկ հասանք Բաղնից Դիւլիս Եղբայրներ հոս մեղի տեսութեան եկան և մեր նպատակը հասկնալով արտօնուեցանք ժողովներ ունենալ, Թէեւ մտադիր էինք շուտով Չնքուշ երթալ, բայց եղբարց թախանձանքին վրայ հոն մնացինք և քարոզեցինք կիրակին և մկրտութեան խորհուրդը կատարեցինք: Ազգայիններու լսարանին մէջ ալ խօսելու պատեհութիւն ունեցանք:

Այսպէս հոս ալ մեր կրցածին չափով ճշմարտութեան խօսքերով Աստուծոյ ժողովուրդը մխիթարելով բաժնուեցանք իրենցմէ: Ասոնք ալ հիւրասէր ժողովուրդ մը գտանք: Հոս 15 տուն Բողոքական ժողովուրդ կայ: Տեղւոյն քարոզիչը Պ. Նիկողոս և տեղւոյն ուսուցիչ Պ. Պետրոս ժողովուրդին հետ մեզ ճամբելու եկան բաւական տեղ: Հոս Բողոքականք փոքր դպրոց մը ունին, և քիչ մը բարձր դպրոց մըն ալ Լուս. ազգայինք ունին, բայց սակաւաթիւ աշակերտներով:

Ջերմուկ ելլելով, մերթ քարուտ ու լուսոտ ճամբաներէ, անցնելով եկանք Չնքուշ Տեղւոյն քարոզիչը՝ Պ. Արմենակ Սարաճեան մեզ դիմաւորելու եկած էր: Առաջնորդուեցանք մեզի համար նախապէս պատրաստուած սենեակ մը և գտանք թէ եկեղեցւոյ քարեր մեզ կը սպասէին ժողովի համար: Հոս ամէն առտու և իրիկուն ժողովներ ունեցանք: Շատ օգտակար կ'ըլլար ժողովներու տպաւորութիւնը ամէնուս վրայ, վասն զի Սբ. Հոգին մեր մէջն էր: Կէս օրերն ալ դպրոցի երկսեռ ուսանողաց և կիներուն զատ զատ ժողովներ կ'ունենայինք: Գերման օրրորդը կանանց ժողովներուն կը նայէր: Հոս հինգշաբթի իրիկուն քարոզեցինք և պատրաստուեցանք մեկնիլ ուրբաթ առաւօտ, հակառակ ժողովուրդին բաղձանաց որ կիրակի հոն անցնէինք: Ժամանակնիս լեցած ըլլալով

հարկադրուած էինք բաժնուհիլ Չնքուշի հողեւորութիւնը և կրօնասիրութիւնը ակնյայտնի կ'երեւար. ունին երկսեռ դպրոցներ և երեք վարժուհիներ. Աշակերտաց թիւը 150ի կը հասնէր. Յաւալին այն էր որ իրենց քարոզիչը իր հրաժարականը տուած և ընդունուած էր. այստեղի 100 տունէ աւելի ժողովուրդը երէցի մը պէտք ունի:

Ահա այսպէս չորս շաբաթ չորս օր պարտելէ և զանազան տեղեր և եկեղեցիներ այցելելէ և գանձը ճշմարտութեան խօսքով միթիթարելէ ետքը մեր կեդրոնը, Մէզրէ, վերագործանք. երկու բան կար որ ամէնէն աւելի աչքի կը զարնէր. Ամէն տեղ, առանց բացառութեան, թէ՛ ժողովարաններուն մէջ, թէ՛ ժամերու և թէ՛ լսարաններու մէջ Բանին ունկնդրութիւնը սիրայօժար էր. Ընդհանուր ժողովուրդին մէջ, Բողոքական թէ Լուսաւորչական, անօթութիւն մը ու ծարաւ կայ Աստուծոյ խօսքին. Իսկ տխուր երևոյթ մըն էր պաշտօնէից պակասութիւնը. Շատ տեղեր ժողովուրդներ հովիւ չունեցող ոչխարներու նման ցըրուած էին իրենց գլխուն ճարը նայելու համար. Ո՛հ թէ Տաճկաստանի Աւետ. եկեղեցին պատրաստ ըլլար և ներկայ օրհնեալ պատեհութենէն օգտուէր յոգևտ հոգիներու փրկութեան և ի փառս Փրկիչ Յիսուսի. Արդեօք մեզի ինկած բաժինը կ'ընենք այս սուրբ գործին մէջ. Երանի թէ Աստուծոյ Հոգին կանչէր շատ մը երիտասարդներ այս օրհնեալ մշակութեան, որ յաւիտենական կենաց վարձք և պտուղ ունի. «Տէր, մշակներ հաճէ հանել Բուհունձքիդ»

Փէրչէնճ ՊԱՂՏԱՍԱՐ ԳԱԼՍՅԱՆ

«ՄԻ ՄՈՌՆԱՐ ԶԻՍ»

Հեղինակ Փրոֆ. Յ. Թ. Գայտեան

Դիւրատար, կսկիկ, սիրուն, ճաշակաւոր տպագրութեամբ դրքոյկ մը, անունով մը հմայքոտ ու մեխնոյշ — «Մի Մոռնար Զիս» — զգայուն, բնական, սրտի յառաջաբանով մը՝ որ կը տանի զիս ե՛տ . . . ե՛տ, մինչեւ Իրիսի եզերքը, Սէրայ — Տիւզիի բարձունքը, այն հին, պատմական յիշատակներով առցուն տունը, ուր իւրաքանչիւր ծառ, թուփ, տերեւ, բան մը կը հծծէ, ուր «Սօզուդ փունար»-էն ծորոզ վճիտ, զուլալ աղբիւրին զլլուքը բան մը կը գդչէ, յիշատակ մը հին, բարի օրերու՝ որ մոռցնել կու տայ քեզ ներկան . . . ու խորհիլ կու տայ . . . Հոն, այդ նահապետական տան սենեակներէն միոյն մէջ կը գտնես ծերուկ մը, մահուան անկողնին մէջ, ու անոր սնարին վերեւ, վտիտ, դալկահար, կարօտէն մաշած, կմախք դար-

ձած մայր մը, Հայ մայր մը, ժողովրդային քերթողուհի մը, որ թաց, կարմրած աչքերն անթարթ սեւեռած է թէեւ՝ հեւքերով ելեւէջող կուրծքին իր ամուսնոյն, սեւեռուն կը մնան անոնք՝ հեռուն, շատ հեռուն, սիրական, միամօր հարազատի մը, որ կ'երգէ — «Ա՛նդ, հեռու, ալեւոր, Հայր ունիմ սգաւոր, Որ միակ իր օրդոյն, Սպասում է օրէ օր :» — Հէ՛ք հայրիկ, սպասում էր. սպասում էր, բայց իր միակ օրդին չէր գալիս . . . Սահմանադրութիւնը ամիսներէ ի վեր հռչակուած էր. Համիտեան անողոք բռնակալութիւնը տապալած էր, իր օրդին աքսորի դատապարտող անդութ ըէժիմը կործանած էր, երթեւեկն ազատ էր այլեւս, բայց . . . իր օրդին չէր գալիս . . . :

Ժանտառեհնդին նոպայէն քիչ մը թեթեւցած՝ բացաւ աչքերը, և նուազուն ինծի յտեղով ըսաւ, «Զաւա՛կս, զաւակս պիտի չգա՞յ արդեօք, ի՞նչ լուր ունիս . . . և գլուխը անդին դարձուց . . . ասդին մայրը, տարագիր միակ օրդոյն մայրը, կը հեկեկար լռիկ . . . :

Շուրջ երկու տարի ետք, նոյն սրտամորմօք բառերը կը կրկնէր տարաբաղդ մայրը, «Զաւա՛կս, ա՛խ, զաւակս չի տեսած պիտի մեռնիմ . . . »

Ու հիմա, երբ այս գողտրիկ դրքոյկը առջեւս ունիմ, այս խորհրդաւոր վերտառութեամբ — «Մի Մոռնար Զիս» — չեմ կրնար մեր տարակայ, սիրուած քերթողին գո՛հար քառակներէն գէթ մէկ քանին չընդօրինակել՝ Աւետարանի ընթերցողներուն, որ բարեհաճութիւնն ունենան «Մի Մոռնար Զիս»-ով, չի մոռնալ ու միշտ յիշել՝ Արեւելեան Որբանոցի սաներն ու սանուհիները — իրենց աղօթքներովը, թելադրութիւններովը ու քսակներովը :

(Շարունակելէ)

Ա. Կ. ԿԻՂՊԵՆԿՅԱՆ

ՄԱՐԶՈՒԱՆԻ ԱՍՏՈՒԹԱՔԱՆԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

Մարզուանի Աստուածաբանական Ճեմարանը, եթէ Տէրը կամի, յառաջիկայ տարի պիտի շարունակէ իր գործը նոյն ուսանողներով, որոնք դասընթացքին երկրորդ տարին կը մտնեն: Ներկայ 1911—1912 դպրոցական շրջանին մէջ տրուած դասերը ընդհանուր առումով ներածական եղան, քանի որ ուսանողները թէեւ զօլէճի Սոփոմոք կարգէն վեր էին՝ բայց զօլէճի շրջանաւարաներ չէին: Գօլէճի շրջանաւարտ մը, կամ մէկը որ հաւասար կրթութիւն ստացած է, կրնայ ընդունուիլ ներկայ կարգին մէջ, դասընթացքը շարունակելու համար յառաջիկայ տարի: Բանի որ

Մր. Էլմբր յառաջիկայ տարի արձակուրդի պատճառով պիտի բացակայի՝ դասերու ծրագիրին, շաբաթական դասաւանդութիւններուն և ուսուցիչներու մասին հետեւեալ կարգադրութիւնները եղած են :

Գրութեանական Ած.բանութիւն (5) Մր. Փայ Հին Եկեղեց. պատմ.թիւն (3) Փրոֆ. Բսէնիտիս Աւետ.ներու Սր. Գրական ուսումնասիրութիւններ (5) Փրոֆ Բսէնիտիս Հնգամատենի » » » (4) Տր. Հուայթ Գարոզարանակն. վրժ.թիւններ (1) Տր. Հուայթ:

Այս յայտարարութիւնը կ'ընենք մեր կարգադրութեանց մասին տեղեկութիւններ տալու համար: Յարմար ուսանողական թեկնածուներու համար յանձնարարութիւններ լսել կը փափաքինք: Տարակոյս չկայ թէ այս երկրին մէջ Աւետարանական պաշտօնէութեան յարմար երիտասարդներու շատ պէտք կայ, և մենք մեր տրամադրելի միջոցներով պատրաստ ենք լաւագոյն կրթութիւն մը տալու, մեր վերոգրեալ ծրագիրին համեմատ: Ասով մեր նպատակն է օգնել Բրիտանական կարգիւր ունեցող երիտասարդներու որ կարող ըլլան Աւետարանը քարոզել իրենց հայրենակիցներուն:

Ճ. Ի. ՀՈՒԱՅԹ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՈՒՐՔԸ

Աւասիկ այն օրինադիժը, որով իրեւ դարման պատերազմական արտասովոր ծախքերուն, առժամաբար տուրքերու վրայ յաւելումներ պիտի ըլլան և նոր տուրքեր պիտի հաստատուին:

Յօդ. 1. Պատերազմական արտասովոր ծախքերուն իբրեւ դարման որոշուած է առժամաբար տուրքերու յաւելումներ ընել և նոր տուրքեր հաստատել, ինչպէս նշանակուած են հետագայ յօդուածներու մէջ: Յօդ. 2. Ենթերու, հողերու և թէմէթթիւրի տուրքերուն վրայ հարկերին քսանըհինգ աւելցած է: Յօդ. 3. Ամսական հարկերին երեք տուրք պիտի անունուի ելեւմտացոյցին մէջ նշանակուած և որեւէ անունով հաստատուած ամէն տեսակ ամսաթոշակներէ, կայս. Անձնական Գանձուն, Էլգաֆի նախարարութեան, Երկրագործական Պանքային և թաղապետական պաշտօնեաներուն ամսաթոշակներէն. նաեւ Էլգաֆի նախարարութեան կողմէ Միւթէ-վէլիներու վճարուած գումարներէն: Այս տուրքէն բոլորովին զերծ են. Ա. յիսնապետները. անոնց չափ թոշակ ստացող արձակազէնները, ցամաքային ու ծովային զինուորները՝ մինչեւ Ա. յիսնապետ և պարզ ոստիկան-զինուորները: Մինչեւ հինգ հարիւր զրուշ ամսաթոշակ ստացողներուն 250 զրչէն

միայն պիտի գանձուի տուրքը: Պաշտօնեաներուն և ուրիշներու համար առաջիկային երբ մնայուն տուրք մը հաստատուի, այս առժամայ տուրքը պիտի վերցուի: (Շարունակելի)

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Գէորգ Ե. Վեհափառ Կաթողիկոսին նույն վրէժն թերթի խմբագրին ըրած յայտարարութիւնները բաւական յուզում յառաջ բերին մեր Հայ և Թուրք թերթերուն մէջ: Կաթողիկոսին յայտարարութեան երկու կէտերը մասնաւորաբար ուշագրաւ են: Առաջին՝ Հայոց մասնակցութիւնը Ռուսական ընկերակազմական յեղափոխականներու գործունէութեան, երկրորդ՝ Օսմ. Հայոց և Ռուսահայոց կացութեան համեմատութիւնը: Երկու խնդիրներն ալ շատ լուրջ ուսումնասիրութեան կարօտ կենսական հարցեր են մեզ համար, երկու խնդիրներն ալ մեր անմիջական և ապագայ գոյութեան հետ շատ սերտ առնչութիւն ունեցող հարցեր են և կ'արժէ որ անոնց նկատմամբ ամէն Հայ յստակ համոզում մը գոյացուցած ըլլայ իրեն համար:

Քսաներորդ դարուն մէջ ինչպէս բոլոր քաղաքակիրթ ազգերը, այնպէս ալ մենք, պէտք է որ իրապաշտական քաղաքականութեան հետեւինք: Մեծ ազգերէն շատ աւելի փոքր ու տկար ազգերը երբեք այս տեսակէտը մոռնալու չեն, եթէ իրենց գոյութիւնը չեն ուզեր վտանգել: Մասնաւոր գոյութեան պայքար մղելու ստիպուած ազգեր ուրիշ սկզբունքներով չեն կրնար առաջնորդուիլ, եթէ անոնք այլասերած չեն, եթէ անոնց մէջ դեռ գոյութեան պահպանութեան բնական զգացումը չէ մեռած: Այս տեսակէտով ալ պարտաւոր ենք դիտելու մեր քաղաքական կուսակցութեանց գործունէութիւնը և մասնաւոր անոնց արտադրած արդիւնքները: Պէտք չէ երբեք մոռնալ նաեւ սա պարագան թէ ամէն մէկ քաղաքական կազմակերպութիւն նախապէս իր միջավայրին ծնունդն է, բայց ան կրնայ հետզհետէ իր վարիչներուն ազդեցութեան տակ այլասերիլ և այլասերել այն տարրերը որոնք իրեն կը հետեւին կուրաբար: Չէ որ նոյն երեւոյթը նշմարելի է նաեւ կրօններու, փրկիստփայական ու բարոյագիտական և նոյնիսկ զբաղական ուղղութեանց մէջ:

Ոչ ոք կրնայ ուրանալ թէ Հայ յեղափոխութիւնը ծնունդ առաւ Հայ ազգի քաղաքական և ընկերակազմական անտանելի առապանքէն: Բայց ոչ ոք կրնայ նաեւ արդարացնել մեր որոշ կուսակցու-

Թեանց այն ձգտումը թէ այս տառապանքին դարման տանելու համար հսկայ Ռուսիոյ կազմակերպութիւնը պէտք էր տապալէինք փոքրաթիւ Ռուս յեղափոխական-ընկերվարականներու հետ միանալով: Այսպիսի ընթացք մը պիտի նմանէր մեր տան մէջ անուշ ջուր ունենալու համար Մարմարայի ջուրերը անուշցնելու փորձին: Ամէնէն մեծ անխուհեմութիւնն է մեր տկար ոյժերը մեր անմիջական պէտքերուն գործածելու տեղ բոլորովին սպառել արտիկուրեան ծրագիրներու իրականացումին ձգտելով: Ռուս յեղափոխական-ընկերվարականը իրաւունք կրնայ ունենալ իր պետական կազմի փոփոխութեան համար յարմար դատած եղանակով պայքարելու, որովհետեւ ան Հայերու պէս ազգային գոյութեան համար պայքար մղելու հարկին տակ չի գտնուիր: Մենք կապկորէն անոնց հետեւելու պէտք չունինք բնաւ: Մենք թէ՛ համամարդկային, թէ՛ համաշխարհաքաղաքացիական, թէ՛ ընկերվարական և թէ՛ մանաւանդ ազգային տեսակէտով պարտաւոր ենք մարդկութեան մէկ զժբախտ ընտանիքը կազմող մեր ազգակիցներու վիճակին բարւոյցումով զբաղելու: Միայն տկարամիտներն ու երկչոտները կրնան խուսափիլ այս պարտականութենէն՝ վարագուրելով իրենց թուլամորթութիւնը ընդհանուր սկզբունքներով և մեծ ու օտար հոսանքներու մէջ խառնուելով: Մեր յեղափոխական կուսակցութիւնները կովկասի մէջ ալ կարեւոր ծառայութիւններ մատուցին անշուշտ տեղական Հայութեան, մանաւանդ եկեղեցական կալուածներու յափշտակութեան և Հայ-Թաթարական պայքարի միջոցին. բայց անոնց յեղափոխական-ընկերվարական գործունէութիւնը ոչ միայն անօգուտ այլ զժբախտաբար նոյնիսկ վնասակար եղաւ: Վնասակար եղաւ, որովհետեւ Հայութիւնը շահ մը չունենալէ զատ այդ շարժումէն վնասներ տեսաւ և նոյնիսկ ցայսօր ալ տեսնելու վրայ է: Ի՞նչ պէտք կար այդ շարժումին հետեւանքով կարգ մը եռանդուն, բանիմաց, զարգացած ոյժեր, որոնք այլապէս շատ օգտակար կրնային ըլլալ իրենց միջավայրին մէջ, աքսորի կամ բանտերու ու լաբէլոյութեան մէջ մաշեցնելու: Այս տեսակէտով կաթողիկոսը իրաւունք ունէր այսպիսի շարժումի մը անօգուտ ըլլալը շեշտելու: Յայտարարութեան քանի մը չափազանցութիւնները պէտք է ներուրին, նկատի առնելով որ այդ յայտարարութիւնը Նովոյէ Վրէժայի ընթերցողներուն համար որոշուած է:

Երկրորդ և կարեւորագոյն խնդիրը Օսմ. Հայերու և Ռուսահայերու քաղաքական կացութեան համեմատութիւնն է, որուն վրայ մասնաւորաբար

ճանրացեր էր Հաֆէ, յառաջ բերելով եկեղեցական կալուածներու խլումը և Դաշնակցականներուն հալածուիլն ու Հայ-Թաթարական պայքարը: Առանց մեր Հայութիւնը նկատի առնելու՝ եթէ անկողմնակալօրէն համեմատելու ըլլայինք մեր անցեալ և ներկայ կացութիւնը Ռուսահայերուն հետ, կարծեմ թէ իբր Թուրքահայ պիտի ըսէինք զըժբախտաբար թէ մեր Ռուսաստանցի եղբայրները մեզմէ համեմատաբար շատ հանգիստ կեանք կը վարեն: Մեր մէջէն չեն ելած Արովեաններ, Նազարեաններ, Նալպանտեաններ, Բաֆֆիններ, Քամառ-Քաթիպաներ, Արծրունիներ եւայլն. մենք չենք արտադրած Էմիններ, Պատկանեաններ, Խալթեաններ եւայլն. մեր միջավայրին մէջ չեն սնած Լորիս-Միլիքովներ, Լազարեաններ, Մատաղովներ, Դորզանեաններ եւայլն, եւայլն: Մեն չենք արտադրած նոյնիսկ Մանթալոֆներ, Մատուրեաններ, Սանասարեաններ եւայլն: Մեր միջավայրը ո՛չ զիտնականներ, ո՛չ գեղարուեստագէտներ, ոչ մեծ առեւտրականներ, ո՛չ հաղարաւոր համալսարանականներ և ոչ ալ նոյնիսկ յեղափոխական կազմակերպութիւններ անուցած է. անոնք ծնած և աճած են արտասահմանի, մանաւանդ Ռուսիոյ մէջ: Եկեղեցական կալուածները Ռուսիան ետ տուաւ, բայց մեր հողային հարցը հոս չլուծուեցաւ. Հայ-Թաթարական պայքարը դադրեցաւ, բայց այստեղ Ատանայի դէպքին տասնեակ հազարներով մարդիկ մորթուեցան Համիտեան ըէժիմի օրով և ապահովութեան խնդիրը դեռ չլուծուեցաւ արեւելեան նահանգներուն մէջ:

Հայերս ո՛չ մէկ պետութեան մէջ ինքնավարութեան չենք ձգտիր, ընդհակառակը ամենուրեք օրինական միջոցներով կ'աջակցինք ազատական տարրերուն՝ այդ երկիրներու ընդհանուր յառաջդիմութեան և բարգաւաճումին համար, մեր շահը տեսնելով ընդհանուր Հայրենիքի բարօրութեան մէջ: Այսպիսի տարր մը հալածանքի ենթակելու համար պետութեան մը վարիչները բացարձակապէս տխմար ըլլալու են: Կաթողիկոսը իր յայտարարութիւններով այս տեսակէտն ալ բաւական յստակօրէն հասկցուցած է, և ամէն երկիրներու արեւապետող տարրերն ալ լաւ կ'ըլլար որ այս տեսակէտով ըմբռնէին Հայ Եկեղեցւոյ պետին խօսքերը: Մեր յեղափոխականներն ալ, որոնք այնքան նպաստեցին Գէորգ Ե.ի ընտրութեան, անշուշտ նկատի կ'առնեն այն ճշմարտութիւնները, որոնք կաթողիկոսին յայտնութեանց մէջ թաքնուած են:

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

## ՆԵՐՔԻՆ

Օսմ. Բ. Խորհրդարանը. Երևափ. Ժողովը շարաթարտաստովոր նիստ գումարեց Պատերազմական նախարարին ստիպողական խնդրանքով ու Վարչապետին համամտութեամբ. Օրակարգն էր զինուորականներու պատժական օրինազրքին կցելի յաւելուած մը, որով զինուորականներու կ'արգելուի քաղաքականութեամբ զբաղիլ: Վարչապետական գրէն ետքը, որով կը ներկայացուէր այն, կարգացուեցաւ Պատերազմական նախարարին պատճառաբանութիւնը, ուր Մանասթըրի վերջին գէպքերը իբրեւ օրինակ կը ցուցուին այսպիսի օրէնքի մը չգոյութեան անպատեհութիւններուն: Օրինագիծը փութով նախաքննութեան յղուեցաւ ստիպողութեան որոշումով: Ահաւասիկ անոր ամբողջութիւնը. Յօդ. 1. Քաղաքական գումարումներու և ցոյցերու մասնակցող և կամ քաղաքականութեամբ զբաղող հրամանատարները, սպաններ և բոլոր զինուորականներն ու հրացանաձիգները (\*խնդիր) 2 ամիսէ 4 ամիս բանտարկութեան կը դատապարտուին և կը փոխադրուին ուրիշ զօրաբանակներ առանց ճանապարհածախս ստանալու: Կրկնութեան պարագային հրացանաձիգներէ զատ միւսները կը վտարուին զինուորական ասպարէզէն և 2է 6 ամիս բանտարկութեան կը դատապարտուին. իսկ ենթասպանները, տասնապետներն ու զինուորները վեց ամիս շլթայակալ բանտարկութեան կը դատապարտուին, և իրենց արձանագրութիւնը կը նորոգուի (Այսինքն անոնց նախորդ ծառայութիւնը չեղեալ կը նկատուի): Յօդ. 2. Կառավարութեան կողմէ վաւերացուած կամ չվաւերացուած քաղաքական կուսակցութիւններու անդամակցող հրամանատարները, սպաններն ու բոլոր զինուորականները զինուորական ասպարէզէն կը հանուին, ու 2է 6 ամիս բանտարկութեան կը դատապարտուին: Ենթասպանները, տասնապետները և հասարակ զինուորները 6 ամիս շլթայակալ բանտարկութեան կը դատապարտուին, իրենց արձանագրութիւնը կը նորոգուի ու իրենք կը փոխադրուին սւրիշ զօրաբանակներ: Յօդ. 3. Ներկայ օրէնքը պիտի գործադրուի իր հրատարակման թուականէն սկսեալ: Յօդ. 4. Պատերազմական և Մովային նախարարները պաշտօն ունին ներկայ օրէնքը գործադրելու Երկուշաբթի նախաքննիչ յանձնաժողովին տեղեկագրերը բացատրութիւններ տուաւ այս օրինագիծին մէջ մուծուած փոփոխութիւններու

վրայ և յանձնարարեց վաւերացնել: Պատերազմական նախարարը, որ ներկայ էր, պաշտպանողական երկար ճառ մը խօսեցաւ և յայտարարելով հանդերձ թէ, երբ բանակ մը քաղաքականութեամբ կ'զբաղի ազգը կործանումէ փրկելու նպատակով, ուրախառիթ բան է, ըսաւ թէ Սահմանադրութեան հոչակման երրորդ օրէն իսկ երբ Իւսկիւպի կուսակալ էր ինք՝ զգաց բանակը այդ վիճակէն փրկելու անհրաժեշտութիւնը և այն օրէն մինչեւ այսօր ոչինչ խնայեց ընել այդ նպատակով: Շատ սպաններ պատժուեցան և շատեր ստիպուեցան ասպարէզէն հրաժարիլ: Մանասթըրի գէպքը վերջապէս մեծ առիթը եղաւ այս օրինագիծը պատրաստելու, զոր փութացած է չըջաբերականով բոլոր զօրաբանակներուն հազորդել և ընդունած է շնորհակալութեան բազում զիրեր: Հիմա գոհ է արդարեւ որ այս ցաւալի գէպքը գէթ բարի արդիւնք մը կու տայ՝ անհրաժեշտ օրէնքի մը հաստատումը փութացնելով: Շահեկան ընդհանուր վիճաբանութիւնէ մը ետեւ յօդուածներուն ջննութեան ձեռնարկուեցաւ և առաջինը ընդունուեցաւ առաջին մասին մէջ սապէս բարեփոխուած. «Քաղաքական գումարումներու և ցոյցերու մասնակցող, քաղաքական յօդուածներ հրատարակող և կամ քաղաքական հրապարակախօսութիւն ընող, և ընտրական իր օրինական իրաւունքը գործադրելէ զատ ընտրական գործերով զբաղող հրամանատարները, եւն. » Երկրորդ մասին մէջ սապէս. «Միւսները 4 ամիսէ մէկ տարի կը բանտարկուին և զին. ասպարէզէն կը վտարուին» Իսկ վերջին տողը սապէս բարեփոխուեցաւ. «Իրենց ծառայութիւնը վեց ամիսէ մինչեւ երկու տարի կ'երկարաձգուի» Երկրորդ յօդուածին առաջին մասին մէջ պատիժը եղաւ 3 ամիսէ մէկ տարի բանտարկութիւն և զին. ասպարէզէ վտարում, երկրորդ մասին մէջ ծառայութեան երկարաձգում վեց ամիսէ մինչեւ երկու տարի: Եւ կցուեցաւ հետեւեալը. «Այսպիսի քաղաքական ընկերակցութիւններու հիմնադիրներ կամ անոնց կազմութեան օգնողներ սոյն պատիժներուն մեծագոյնը պիտի կրեն» Երրորդ յօդուածը որ բոլորովին նոր էր՝ յանձնաժողովին յղուեցաւ բարեփոխման համար: Զորքող և հինգերորդ յօդուածները որ ընդունուեցան՝ ահաւասիկ. «Առանց պատկանեալ նախաբարութիւնէն ըստ սովորութեան արտօնուելու, կրթական և բարեգործական նպատակով կազմուած ընկերակցութիւններու անկամակցողներ 45 օրէ մինչեւ 3 ամիս կը բանտարկուին» «Այս յաւելուածական յօդուածները պիտի գործադրուին հրատարակման թուականէն

սկսեալ:» Երեքշաբթի բարեփոխմամբ ընդունուեցաւ յանձնաժողովին վերադարձուած երրորդ յօդուածը որ պատմներ կը սահմանէ խոռվարարական գաղտնի ընկերակցութիւններու պատկանող զինուորականներու դէմ: Յետոյ Ելեւմտական փոխ նախարար Ճավիտ պէյ երկար ճառով մը պաշտպանեց նոր ելեւմտացոյցը, որ իր նախորդին կողմէ պատրաստուած է: Ըսաւ թէ ընդհանուր գումարն է 36 միլիոն ոսկի, նախորդ տարուանէն 3 միլիոն պակաս: Հանր. Պարտքի մասը, որ Ազուլիսը կը կազմէ, կը ներկայացնէ իբր 11 միլիոն, որու 3ը հանգրտեան թոշակի յատկացուած է, իսկ 8ը փոխառութիւններու տոկոսի: Պատերազմական նախարարութեան յատկացուած է 9½ միլիոն, Հանրագուտ գործերու նախարարութեան՝ անցեալէն 100,000 աւելի, որու 40 հազարը Պաղտատի նահանգին, 60,000ն ալ Անատոլուի ճամբաներուն յատկացուած է: Հասոյթները ամէն գծի վրայ կ'աւելնան անխափան և, եթէ մաքսատուրքի 4 առ հարիւր յաւելումը և փաթէնթի տուրքը հաստատուին, չուտով կարելի պիտի ըլլայ հաւասարակշիռ ելեւմտացոյցը: Երկրին հանրային համագումար պարտքը 140,950,000 ոսկի է, որու 15,000ը վճարուած է, և եթէ անցեալ տարուոյ 10 միլիոնի փոխառութեամբ չինուող Պաղտատի, Սումա-Պանարմայի և Եմէնի երկաթուղիները իրական հարստութիւն սեպուին, ինչպէս են իսկպպէս, համագումար պարտքը 115 միլիոնի վերածուած կ'ըլլայ: Պարտքի նուագութիւնը փառք մը չէ, օգուտ ալ չունի, և եթէ երկրին ընկան հարստութիւնները չահադրուին, այս ալ չուտ կը սրբուի: Վարչապետը գնահատեց ելեւմտացոյցը և ուրախութիւն յայտնեց հասոյթներուն անման համար: Քանի մը երեսփոխաններ պախարակեցին բացը փոխառութեամբ գոցելու սովորութիւնը, աւելորդ պաշտօնեաներու գործածումը և տուրքերու ծանրութիւնը: Զորեքշաբթի ընդհանուր վիճարանութիւնը քիչ մը եւս յառաջ տարուեցաւ: Վերջապէս ձեռնարկուեցաւ յօդուածներուն ըննութեան և Հանր. Պարտքի յատուկ գլուխին բոլոր յօդուածները, թուով 31, գրեթէ անփոփոխ քուէարկուեցան:

Մայրաքաղաք. Եւրաթ Մերակոյտը մերժեց Սահմանադրութեան բարեփոխման յօդուածներուն ստիպողութիւն տալու պայմանը և սահմանադրական յանձնաժողովին յղեց զանոնք: Մերժեց նաև Արաբերէն խնդրագիր մը առանց Թուրքերէն թարգմանութեան ի նկատ առնելու առաջարկ մը: Ուրիշ նստի մը մէջ ալ նախաքննութեան յղեց օրինագիծ մը որ քաղաքային ակէն կարգի պաշտօնեաներու կ'ար-

գելէ քաղաքական կուսակցութիւններու անդամակցիլ և ակումբներ երթալ: — Իսնայ փաշայի հրկիզեալներուն բաշխուեցաւ Վեհ. Սուլթանի նուէրը (80.000 դահ.), մեծերու մէյմէկ ոսկի, իսկ փոքրերու մէյմէկ քառորդ ոսկի յատկացուելով: Փարիզեան գործարան մը անոնց համար 250 ոսկի զրկեց Անզգ. դեսպանին տիկնոջ ձեռամբ:

Նահանգներ. Եունիքի Ալպանական Ազգ. Ժողովը իր գործն աւարտեց Յունիս 20ին: Իփէքի կառավարիչը գոհ մնաց ընդհանուր հանդարտութենէն: Սակայն 22ին էնվէրի պէյի նախկին ընկեր հարիւրապետ Թայեար պէյ, որ հիմա օխերիմ թշնամի է Իթթիհատին, 11 ընկերներով և 81 զինուորներով Մանասթըրէ լեռ ելաւ քանի մը նախարարներու պաշտօնակուծութիւն, ընտրական զեղծումներու բարձում և զանազան բարենորոգումներ պահանջելով: Նաև զանազան միջոցներով ուրիշ սպաններ եւս հրաւիրեց իրեն միանալ: Ըմբոստները ամէնն ալ Ալպանացի են և զաղանի ընկերակցութեան մը կը պատկանին: Օտար հիւպատոսներու զրկուած յայտարարութեան մը պատճէնէն կը հասկցուի թէ իրենք Ալպանիոյ համար չեն աշխատիր, այլ կ'ուզեն ամբողջ երկիրը կործանումէ փրկել հակասահմանադրական արարքներու վերջ դնելով և ճշմարտապէս սահմանադրական կառավարութիւն մը պահանջելով: Զ. գորաբանակի հրամանատար Ֆէթի փաշա և Զինքնիչ Զէքի պէյ անմիջապէս Մանասթըր փութացին, պատուիրակութիւն մը զրկուեցան ըմբոստներուն մօտ և ի վերջոյ Ֆէթի փաշա մայրաքաղաքս եկաւ պարտուպտուած քացատրութիւնը տալ իշխանութիւններուն: Զինուորականներու քաղաքականութեամբ զբաղին արգելող օրինագիծը լաւ տպաւորութիւն գործեց զին. շրջանակներու մէջ ընդհանրապէս, և Սէլանիկի և այլ քաղաքներու պահակազօրքեր յայտարարեցին թէ պատրաստ են ըմբոստներուն դէմ քայլել, եթէ կառավարական ընդհանուր ներման խոստումէ մը ետեւ չհաւանին անոնք իրենց տեղերը վերադառնալ: Դէպքը իր սաստկութիւնը կորուսած կը թուի Արդէն իսկ բռնուած կամ անձնատուր եղած են 3 սպայ և 35 զինուոր, կը մնան միայն 9 սպայ և 36 զինուոր, որոնց ետեւէ 3 զօրախումբ զրկուած է: Արտաքին գործերու նախարարը Օսմ. դեսպաններուն հետագրեց թէ Մանասթըրի շարժումը սահմանափակուած է և ի մօտոյ կը զսպուի: — Սամուսի մէջ ըմբոստութիւն մը ծագած է Սոփուլուի ներում շնորհուած չըլլալուն համար: — Գավալայի նաւահանգստին չինութեան մենաշնորհը Ֆրան-

սահպատակի մը տրուեցաւ 60 տարւոյ պայմանա-  
ժամով: — Պիթլիսի կուսակալը քննական պտոյ-  
տի ելած է դէպ Ախլաթ և Մուշ:

Ա. Ե. Ժող. Կ. պոլսոյ Ե. Ք. Ընկերակցութիւնը  
կիրակի դարձեալ Քիւլչիք Չէքմէճէի կայարանին  
մօտ (մայրաքաղաքէս իբր մէկ ժամ հեռու) հովա-  
սուն վայր մը կատարեց իր սովորական աղօթա-  
ժողովը, և երկու սեւէ 75 հոգի ներկայ եղան:  
— Այս իրիկուն Բապըթ Գոյէճի մէջ կը տօնուի  
Պարտիզակի Բարձր. Վարժարանի զխաւոր ուսու-  
ցիչ Արմենակ էֆ. Տէր Յակոբեանի պաշտօնավա-  
րութեան 30ամեակը հասկերոյթով մը, որու ներ-  
կայ պիտի ըլլան նոյն վարժարանի շրջանաւարտ-  
ներէն քաղաքիս և արուարձաններու մէջ գտնուող-  
ները: Բնականաբար զուարթ բաժակաճառեր պի-  
տի խօսուին և զնահատման ու երախտագիտու-  
թեան շօշափելի սուպոյցներ պիտի տրուին յորել-  
եարին: Ա. Ե. Ժող. Կ. Վարժարանի կը խնդակցի կրթա-  
կան այս արդիւնաւոր մշակին, և ոյժ ու կորով կը  
մաղթէ որ կարենայ ուսանողներու նորանոր սե-  
րունդներ կրթել զեռ բազմաթիւ տարիներ: —  
Կիմանանք թէ Էօտէմիշի քարոզիչ Պատ. Յարու-  
թիւն Ք. Արմաղանեան հրատարած է. Հետեւա-  
պէս տրամադրելի է ուրիշ եկեղեցիի մը համար,  
եկեղեցին ալ կը կարօտի ուրիշ պաշտօնէի մը: Այս  
առիթով տեսնել թերթիս ծածկոցին Ուշագրութիւն  
խորագրով հատուածը:

Հայ Ժող. Պատրիարք Հայրը անցեալ ուրբաթ  
Յունաց Պատրիարքին այցելութիւն տուաւ զին-  
ուորագրութեան խնդրին վրայ տեսակցելու հա-  
մար: Եբաթ զորձակատարը Դատական նախա-  
րարին ղրկեց սեղեկութիւն մը ստանալու համար  
վերջին զիմուսին վրայ և պառասխան ստացաւ  
թէ անմիջապէս նախարարներու խորհրդին պիտի  
ներկայուի խնդիրը, որ է Ծերակոյտէն ետ առնել  
նոր օրէնքը և Քրիստոնեաներու զիւրատար ընձա-  
յել զինուորական ծառայութիւնը: Նոյն օր Բու-  
մանական ղեսպանին այցելութիւնն ընդունեցաւ  
և Իճանէսքուի խնդրին վերաբերեալ հարցման մը  
պատասխանեց թէ Ազգ. Ժողովը վերջին նստին մէջ  
Վարչութեան լիազօր իրաւասութիւն տուաւ այդ  
խնդիրը լուծելու, ուստի հարկ է քիչ մը ժամա-  
նակ տալ անոր: — Ատանայի մէջ կախաղան հան-  
ուած երեք եղբայրներուն համար նոր թագրիր մը  
մատուցուեցաւ Դատական նախարարութեան: —  
Դատքէօյի Թաղ. Խորհուրդը յաջողեցաւ տեղւոյն  
Արամեան Վարժարանը, որ իբրև ազգ. կալուած  
նշանակուած չէ, իբրև եկեղեցապատկան կալուած  
ճանչցնել «մուգաթաա ի դէմին»ի գործողութիւն

կատարելով: Ըստ այսմ, յետնեալ տուրքերու խըն-  
դիր շինար ալեւս և ինամակալութիւնը կը պատ-  
կանի Թաղ. խորհուրդներու ատենապետներուն:  
— Միհրան էֆ. Ինճէեան, որ Պոլսոյ իր կալուած-  
ները ազգին կտակեց, որոշած է Նիսի իր կալ-  
ուածներն ալ կտակել: Թիֆլիզի մէջ Յունիս  
ՂԱին մեռած Նունէ Տէր Ազարեան 50,000 բուլլ-  
թողած է կրթական և կրօնական հաստատութիւն-  
ներու: Ուրիշ մը, հանգուցեալ Պաղտասարեան,  
5,000 բուլլ թողած է քաղաքին բարեսիրական և  
կրթական հաստատութիւններուն: — Եղիշ Արքայկ.  
Դուրեան Արմաշ ուղեորեցաւ Դպրեվանքի քննու-  
թիւններուն ներկայ գտնուելու համար: — Իսլա-  
հիյէ Պատրիարքարան ուղղուած հեռագիր մը ցա-  
կը յայտնէ տեղւոյն կառավարչին պաշտօնանկու-  
թեան համար և կը խնդրէ անոր վերահաստատման  
համար աշխատիլ: Ատանայէ կը գրուի թէ, եթէ  
կառավարութիւնը պնդէ զանձել իր պահանջները,  
փոխառու բոլոր վաճառակօնները պիտի սնանկա-  
նան: Վանայ առաջնորդը կը հազորդէ թէ Հասան  
աղա անուն բռնաւոր մը ձեռնարկած է գրաւել  
Սալխանէ գիւղին հողերը, զորս Խրիմեան Հայրիկ  
ուրիշ Քուրդերէ գնած է նոյն գիւղին համար:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Իսլախ և պարբերաբար. Հեռագրի մը համաձայն  
Արտաքին գործերու նախարար Սան Ճուլիանօ  
մարքիզը տէրութիւններու ղեսպաններուն ղեկու-  
ցած է թէ Իտալիա ամբողջ Յունիսի մէջ ընդ-  
հատեց իր զինուորական գործողութիւնները՝ տէ-  
րութիւններու բանակցութիւններուն կրթին սպա-  
սելով: Մինչեւ Յուլիսի երկրորդ շաբաթն ալ պիտի  
սպասէ և յետոյ պիտի վերսկսի իր գործողութիւն-  
ները: Ծերակոյտը քուէարկեց Գաղթային նախա-  
րարութեան օրինագիծը որ արդէն ընդունուած  
էր Երեսփ. Ժողովէն, և փակեց իր նստաշրջ-  
անը: Սթէֆանի գործակալութիւնը անցեալ  
հինգշաբթի սա հեռագիրը ստացաւ Պուքէ-  
միշէ. «Այս առաւօտ մեր զօրքը Սիտի Սաիտի  
դէմ յարձակեցաւ թշնամի խրամատներու վրայ Ի-  
տալական թեւ մը դուրս հանեց թշնամին իր դիր-  
քերէն և հարկադրեց զայն նահանջել: Թշնամին կը  
բաղկանար 6,000 հոգիէ և դաշտին վրայ 600 մեռ-  
եալ թողուց: Միեւնոյն ժամանակ գրաւուեցաւ ու  
քանդուեցաւ թշնամի բանակեաղը» Ուրբաթ ալ  
սա հեռագիրը ստացաւ Ֆէրուայէ. «Այս առաւօտ  
մեր զօրաբաժինը ամբողջութեամբ յարձակեցաւ  
Սիտի Սաիտի բարձունքին և շրջակայ դիրքերուն

վրայ, ուր ապաստանած էին երէկի նահանջողները և օգնական ոյժեր ստացած: Գործողութիւնը սկըսաւ արշալոյսէն քիչ հոքը և մասնակցութեամբ նաւային հրետանիին: Թշնամին բռնուն ընդդիմութիւն ըրաւ, բայց ժամը 8.30ին Իտալական դրօշը պարզուեցաւ բարձունքին աւերակներուն վրայ և անմըջապէս հրետանի զետեղուեցաւ հոն, մինչ ամբողջ գծին վրայ անկարգօրէն կը ցրուէր թշնամին, գաշտին վրայ թողլով 200 մեռեալ և քանի մը վիրաւոր: Մեծաքանակ զէնք, ռազմանիւթ կաշեղէն և արջառ գրաւուեցաւ: Թանի թղթակիցը այս իրողութիւնը կը հաստատէ Օսմ. բանակետղէն գրելով: Կ'ըսէ թէ առաջին օրը Իտալացիները ստիպուեցան Պուքէմիչ քաշուիլ, բայց զիչերը վիրաւորներն ու սպանեալները դաշտէն հաւաքել գացող արձակազէններ Օսմ. բանակետղը պարպուած գտան և հետեւեալ օր Իտալացիները կըրկենցին յարձակումը: Պատերազմական նախարարութեան հասած հետազիւր մը 500 կը ներկայացնէ Իտալացիներու սպանեալները և կ'ըսէ թէ Սիտի Սաիտ թողուեցաւ գերազանց ոյժի առջեւ: Շաբաթ թշնամին զիրքը ստուգելու նպատակով օդանաւորդ մը վերելք կատարեց, բայց մեքենայի խանգարման պատճառով ստիպուեցաւ Պուքէմիչէ 12 հզմթ. հետու վար իջնել և մօտագոյն Իտալեան ամրութիւնը երթալ: Օսմանցիի հետք ընաւ չտեսաւ և Իտալեան ղօրքեր գացին օդապարիկը առին: Կը հերքուի թէ Մով. Վիալէ պատուիրակութիւն մը ընդունած է Եգէականի կղզիներու ընկիչներէն և թէ յայտարարած է որ Իտալիա շուտով անոնց ինքնօրինութեան խնդրով պիտի զբաղի:

Հեռագրաւորքեր. Այս շաբթու տեղի կ'ունենայ Զարին և Վիլհելմ կայսեր տեսակցութիւնը, Գերման թերթ մը կ'իմանայ Փեթրսպուրկէ թէ Գերման Վարչապետը Մոսքուս և Վարչաւա պիտի երթայ և Փեթրսպուրկի մէջ պիտի տեսակցի Մ. Սասանովի հետ: Թան կ'իմանայ թէ Ֆրանսական զեսպան Մ. Լուի Փեթերոզովի մէջ Զարին ներկայացած է և երկարօրէն տեսակցած Ն.Վեհափառութեան հետ: Կ'իմանայ նաեւ թէ Մ. Սասանով այս տարի Անգղիա պիտի երթայ, որով պիտի ամրապնդուի երկու պետութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող բացարձակ վստահութիւնը. — Աւստրիոյ Երեսփ. Ժողովը վերջնապէս ընդունեցաւ զին. բարենորոգումներու օրինագիծը, Ֆրանսայի Երեսփ. Ժողովը ալ 79ի զէմ 460 քուէով ընդունեցաւ Մարտի Ֆրանսական թեւարկութեան օրինագիծը. — Միաց. Նահանգներու Ռամկավարական կուսակցութեան Ազգ.

Ժողովը նախագահութեան ընտրելի անուանեց Վր. Ուիլսոն: — Ձեռքի գրութեամբ շինուած Վիլհելմ Լուիս ղեկաւոր օդապարիկը տասը ժամ սաւառնեցաւ Հիւսիսային Մովուն վրայ և Համպուրկէ Հէլիկոլանտ, ապա էմզէ Վիլհելմսհապէն գնաց և յետոյ Համպուրկ վերադարձաւ: Նաւային վարչութիւնը հաւանեցաւ ընդունիլ զայն: Գերման ուրիշ ղեկաւոր օդապարիկ մը, Շլապէն, պայթեցաւ և 30 հոգի վիրաւորուեցան: Խոռաթիոյ կառավարչին խորհրդական Մ. Հարվոյիչ, որ անցեալները վիրաւորուեցաւ Մ. Բուվայի վրայ կատարուած մահափորձին ժամանակ, կիրակի մեռաւ: Մեռաւ նմանապէս Սերպիոյ Վարչապետ Մ. Միլովանովիչ կարճատեւ հիւանդութենէ մը ետեւ, նաև Անգլ. բանակի փառաւոր մարաշխաններէն Սըր Ճորճ Հուայթ, Լէտիսթի հերոսը, 77 տարեկան էր: — Փարիզի Փասթօրեան հաստատութեան տնօրէն Մ. Ռու կ'ըսէ թէ երկու բժիշկներ հնտախտի մանրէն իրենց մէջ ներարկեցին մօրթի տակէ և անվնաս մնացին: Իրենց բուժած մանրէն ալ կլլեցին և չհիւանդացան: Փորձերը պիտի շարունակուին: Փարիզեան ուրիշ գիտական աշխատանոցի մը մէջ Նիւ Եօրքի Բաքիֆէլըր հաստատութեան տնօրէն Ֆրանսացի մը, Տր. Բարէլ, վարպետներու առջեւ ճառախօսելով մահամերձները թարմ արիւնի ներարկումով կենդանացնելու կարգ մը փորձեր պարզեց: Այս վափուկ գործողութեան մէջ նկատելի կարեւոր բանը սա է որ չլիանձրանայ արիւնը: — Ռուսիոյ Պատերազմական նախարարութեան հրետանիի ճիւղէն հարիւրապետ Բորթէվիչ, գիտուն անձ մը, իբր չորս շաբաթ առաջ եռամսեայ արձակուրդով և յանձնարարական գրերով Եւրոպա գնաց պետական այլազան վառօդարաններ այցելելու նպատակով և Պերլինի մէջ ձերբակալուեցաւ իբր լրտես: Յարգ ունէ կասկած չհաստատուեցաւ անոր վրայ, և կը կարծուէր թէ շուտով պիտի արձակուի: Ընդհակառակն խնդիրն սկսած է սպառնալից երեւոյթ մը ստանալ երկու երկիրներու մամուլին մէջ երեւցած բռնուն վիճարանութեան հետեւանքով: — Եգիպտոսի մէջ ձերբակալուեցան չորս Պուլկարներ, որ Եգիպտոսէ Սոֆիա դժոխային մեքենաներ ղրկած էին «Հայաստանի Պատմութիւն» անուն գրքի մը ձեւին տակ: — Սերպիոյ նոր Վարչապետ Մ. Մարքուս Թրիֆլովիչ Աքուփչիւնային առջեւ կարգաց յայտարարութիւն մը, որով կ'ըսէ թէ կառավարութիւնը Թագաւորին կոչին պատասխանեց, որպէս զի Աքուփչիւնային կարենայ ի գլուխ հանել իր ձեռնարկները:

روزنامه هفتاد و نه - در شماره ایلی هاونده - مدیر مسئول - صموئیل ق. هارونیویان

<b>ՊԱՅՄԱՆՆԵՐ</b>	
Տարեկան 40 ԴՏ.	
Սեպտեմբեր 2 Տու.	
Անդրիս 8 ԴՏ.	
Ուրիշ 10 Տու.	
Գրքեր 40 ԴՏ.	
Ստանդարտ գիները	
— Կարգը —	

ԱՒԵՏԱՐԵՐ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Խմբագիր

Վեր. Տր. Ֆ. Ու. Մեքալըմ

Պայլը Լուսն,  
Կ. պոլիս, Թուրքիա

THE AVEDAPER

AN ARMENIAN WEEKLY

EDITOR

REV. F. W. MACALLUM, D. D.

American Bible House  
Cons/ple, Turkey

ՊԱՅՄԱՆՆԵՐ

An. Subscrip.	Ps. 40
U. S. A.	§ 2
England	Shils. 8
Other countries	Frs. 10

Single Copy 40 Paras

Advertising rates on application

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Անպաշտօն մնացած քարոզիչներ և պաշտօնեայ չունեցող եկեղեցիներ կրնան իրենց պէտքը Ա-ե-ր-բ-է-ի իմացնել, և մենք սիրով պիտի նշանակենք զայն Ա-ե-ր. Ժողի լրարածնին մէջ:

ՄԵՋԻ ՂՐԿՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԿԱԹՈՒՆ ՄԸ ՋՈՒՐ ԱՅՐԱԾ ՍՐՏԵՐՈՒ, Գրեց՝ Ներսէս Եպիս. Դանիէլեան (Սասկան Վարդ.) Տպ. Օ. Արզուման, 1912, Կ. Պոլիս: Էջ՝ 74, Գին՝ 5 դան.: Հանուր Հայութեան ընդհանրապէս և տաճարային կիսկեցիներու մասնաւորապէս՝ հոգիներուն խօսող հատոր մը, որ ընթերցողին աչքէն արցունք և սիրտէն յոյս կը բխեցնէ: Արդիւնքը սահմանուած է կիրիկեան Որբանոցներու: Դիմել հեղինակին, Առաջնորդարան Հայոց, Հալէպ և Կ. պոլսոյ մէջ Յ. Գրլըճեան Գրատուն, Չագմագճըլար: ՏԻԵՋԵՐՔԻ ԱՌԵՂՄՈՒԱԾՆԵՐԷՆ ՄԷԿԸ, Չարէի հարցը, Գրեց՝ Ս. Հ. Գալիօնեան, Տպ. Օ. Արզուման, Հետաքրքրական հարցի մը մասին գեղեցիկ ուսումնասիրութիւն մը, Դիմել Յ. Գրլըճեան Գրատուն, Չագմագճըլար թիւ 25, Կ. պոլիս:

ԻԼՄԻ ԹԱԼԻՄ, Հեղ. Փրոֆ. Սարգիս Լեւոնեան, Էջ՝ 37, գին՝ 1 դան.: Այս օգտաշատ ու գեղեցիկ գրքոյկը նահատակ Փրոֆէսորին աշխատակց գործերէն է և տպուած է Այնթապի Կ. Թ. Գոլէճին նորահաստատ տպարանին մէջ: Ուրախ ենք տեսնելով որ գաւառի կրթական բարձր հաստատութիւններն ալ օրէ օր կ'ունենան իրենց սեփական տպարանները և օգտակար հրատարակութիւնները: Շիտակը իբր նախափորձ շատ յաջող է գոլէճի տպարանին այս անդրանիկ արտադրութիւնը, կը սպասենք աւելի գեղեցիկ Հայերէն հրատարակութիւններու ալ, Յաջողութեան մաղ-

թանքներու կը միացնենք նաեւ մեր շնորհաւորութիւնները:

Գրքոյկէն ունենալ փափաքողներ կրնան զիմել Կ. Թ. Գոլէճի հասցէով:

ՉԵՆՈՒ ԳԼԱԿ՝ Հանդէպ Արքե. Բնադասարանեան, Գրեց՝ Միհրան Յովհաննէսեան, Էջ՝ 214, Գին՝ 15 դան., Տպ. Օ. Արզուման: Հայկական տպագրութեան շորհարիւրամեակին առիթով հրատարակուած այս գեղեցիկ երկասիրութիւնը կը յանձնարարենք բոլոր բանասէրներու և լուրջ ընթերցումէ հաճոյք զգացողներու: Դիմել Կ. պոլսոյ Հայ Գրավաճառներուն:

ԱԶԳ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ, Համագասպ Վրդ. Եղիսէեանի, Լուրջ ու օգտակար հատոր մը որ կը խօսի Հայ եկեղեցւոյ դերին մասին Ազգ. Պատմութեան մէջ, Էջ՝ 192, գին՝ 7.20 դան.: Թղթակազմ, 10 դան.: լաթակազմ, Դիմել Կ. Պոլսոյ Հայ Գրավաճառներուն:

ՍՐԲԱԶԱՆ ՆԵՐՇԵՂՈՒՄՆԵՐ, (Տնակն Բերլին-ձնէր) Գր. Հ. Գալուստեանի: 35 գեղեցիկ քերթուածներ, մաքուր տպագրութեամբ, Էջ՝ 64, Գին՝ 4 դան.: Դիմել հեղինակին, Ա-ե-ր-բ-է-ի Խճմագրութեան հասցէով:

ՀԸՍՍԻՅԱԹ ԳԱԹՐԷԼԷՐԻ, Գր. Հ. Գալուստեանի: Հայատառ Թրքերէն զգայուն և գեղեցիկ բանաստեղծութեանց հաւաքածոյ մը, Էջ՝ 88, Գին՝ 4 դան.: Դիմել հեղինակին, Ա-ե-ր-բ-է-ի Խճմագրութեան հասցէով:

ՎԱՐՁՈՒ ՍԵՆԵԱԿ, Պատուաւոր աման մը մէջ ի նշանթաշ (Թ. 10, Տիկէր Պէքճի փողոց):

Հոգեւոր պաշտամունք՝ վաղը, Ժամը 3ին (Բ. Ե.), Կոստիկեան բնակարանի մէջ, Պոյաճըղիւղ Պիտի խօսի Տիար Յ. Մ. Թոմպուլեան: